



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99-82

Գրական - Գեղարվեստական աճագրություն

1917

№ 1-2-3/4

Բիճվա.

ԳՐԱԿԱՆ - ԳԵՂԱՐԻԷԱՏԱԿԱՆ

ԱՆՄԱՆԱԻ

Ն Ի Ի Թ Ե Ր Ո Ւ Ն Ե Ն. — ՍՏ. ԶՕՐԵԱՆ, ՎԱԶԱՆ
ՏԷՐԵԱՆ, ՄԻՔ. ՄԱՆԻԷԼԵԱՆ, ԱՐՄԵՆՈՒՅԻ ՏԻԳ-
ՐԱՆԵԱՆ, ՌԱՖԱՅԷԼ ԶԱՐԴԱՐԵԱՆ, ՎԱԶԱՆ ԹՈԹՈ-
ՎԵՆՑ, ՊԱԶԱՐԷ, ՏԻԳՐԱՆ ՏԷՐՈՒՆԻ, Գ. ՔԵԱԼԱ-
ՇԵԱՆ, ԱՆՈՒՐՋ, ԱՐՇԱԽԻՐ ԽՈՆԴԱՐԵԱՆ,
Մ. ԷՓՐԻԿ, ՎԻԹՈՒ ԶԻՆՆԻ, Գ. ՇԱՀԻ-
ՆԵԱՆ, ԳՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ ԵՒ ԳԻՍԱԿ

2

Թիֆլիս

1917



ՍԱՏԱՆԱՅ

(Գիւղացու պատմած)

I

Երդուում եմ, հաւատա վկայ, ասածներին մէջ մի սուտ բան չկայ: Ամենքը գիտեն, որ Խէչանն իրա օրում, սուտ խօսել սկի չի սիրում:

Էս բանը, աղպէրս որ դուք էք, պատահել է իմ ջահել ժամանակ, երբ ծառայում էի Վերին Շէն գեղում... Էհ, ջահելութիւնն էլ մի բան է, որ գալիս է ու անցնում: Զահել մարդու գլխով շատ բաներ են անցնում:

Իմ գլխովն էլ, պէտք է ասեմ, շատ բաներ են անցել: Կեանքումս քսանից աւելի տան ծառայ եմ եղել. շատ մարդ եմ փորձել, շատ հաց եմ կտրել ու էնքան էլ բոն եմ տեսել ու լսել, որ ամիսներով նստեմ-պատմեմ—չի հատնի: Համա էդ ամենից մի բան իմ մտքից սկի չի գնում, ու ամեն անգամ, երբ խօսում են սատանաների ու կնանոց վրայ, իսկոյն միտս է գալի:

Յայտնի է Աստծուն, ձեզանից էլ ինչ թագցնեմ:

Ոնց որ ասեցի, ծառայում էի էդ գեղում, աղա Ակոբ կասէին, նրա տանը: (Էդ ժամանակ ես կըլէի մի տասնիննը-քսան տարեկան): Աղա Ակոբն ինքը, պէտք է ասած, շատ լաւ մարդ էր. ոչ կը խմէր, ոչ կը հարբէր, ոչ էլ մարդու կասէր—մեկնած ոտդ քեզ քաշի: Մի տարի մնացի նրա կշտին, մի օր չասաւ՝ «շան որդի, աչքիդ վերեւը սև ունք կայ»: Էսպէս քրիստոնայ մարդ էր... Սաղ շաբաթը իր ալրի առուտուրի հետ կըլէր, իսկ կիրակի օրերը կամ ժամ կերթար կամ գեղերը՝

պարտքեր հաւաքելու: Էնքան էլ հասակով չէր նա. կըլէր էսպէս՝ յիսունից մինչև վաթսուն տարեկան. իսկ կնիկը շատ ջահել էր. իրան սկի չէր սաղում: Տեսնողը կասէր՝ սա աղջիկն է ու ոչ թէ կնիկը: Համա որ էդպէս էր, ինչ կասես... Ետի կնիկ էր, դրա համար էր էդպէս ջահել... Երեխայ էլ չունէին:

Իմ բանը նրանց տանը էն էր, որ եզներ էի բանացնում, ալիք էի կրում, հունձ էի անում. մի խօսքով էն, ինչ որ ամեն մի հօտաղ է անում... Գործս թեթեւ էր: Շատ ժամանակ էլ պարապ մեկնւում էի խոտի վրայ ու շուր ածում: Ջահել տղայ ու շու՜... Ածում էի ինձ համար, ածում մինչև կէս գիշեր: Հարցնողն ո՛վ էր, թէ ի՞նչ ես անում: Ակոբ աղան, ոնց որ ասի, լաւ աչքով էր մտիկ տալիս ինձ, իսկ կնիկը հենց առաջին օրից մի ուրիշ տեսակ երևաց:

Դեռ մի քանի օրւայ գնացած էի, մի օր նա ինձ հարցնում է.

— Ո՞րտեղացի ես, Խէչան, — ասում է:

Էս ինչ գեղից, — ասում եմ:

— Հէր-մէր ո՞ւնես, — ասում է:

— Հէր չունեմ, ասում եմ, — բայց մէր ունեմ:

Նա մտիկ արաւ երեսիս ու ծիծաղեց:

— Իսկ կնիկ ո՞ւնես, — ասում է:

— Չէ, — ասում եմ ամաչելով:

— Իսկ ես, — ասում է, — հենց իմացայ պսակւած ես:

Ես բան չխօսեցի: Նա նորից երեսիս մտիկ արաւ ու ծիծաղեց:


— Ո՞վ գիտի նշանած ես, — ասում է:

— Չէ, — ասում եմ:

Նա էլի ծիծաղեց:

Դրանից ետոյ ինչ որ նա ասէր ինձ, միշտ կը ծիծաղէր, ձեռքով կը խփէր ուսիս, հանաքներ կանէր... Շատ ժամանակ էլ, երբ ես պարապ ըլէի՝ կը գար կողքիս կը կաղնէր ու գէսից-գէնից կը խօսէր... Գործից ետոյ, ամեն իրիկուն ես սովորութիւն ունէի շուր ածել: Հենց որ Ակոբ աղան գար քնէր, ես կըսկսէի իմ շուրն... Էսպէս ժամանակ նրա կնիկը մին-մին կը գար հեռից կը լսէր:

Մի իրիկուն էլ էդպէս, ծառերի տակ նստած, ածում էի ինձ համար, մին էլ տեսնեմ նա եկաւ ու կողքիս նստեց, ձեռը չանի տակ դրած:



Ես շւի ձէնը կտրեցի:

— Դու, Խէչան, — ասում է, — շախով տղայ ես, շատ լաւ ես ածում: Որ քու ածելը լսում եմ, — ասում է, — սիրտս փուլ է գալի, ուզում եմ լաց ըլել...

Ես բան չեմ խօսում: Իսկ նա էլի երեսիս է մտիկ տալի ու խօսում:

— Ինչպէս երևում է, Խէչան, — ասում է, — դու լաւ հոգի ունես. երանի էն աղջկան, որ քեզ պտի առնի...

«Էդ խօսքերն ինչի՞ համար են», մտածում եմ ու էլի բան չեմ խօսում: Իսկ նա երկար խօսում է ու երեսիս մտիկ տալիս էնպէս աչքերով, որ ես ամաչում եմ:

— Դու հօ նշանած չե՞ս, — ասում է, — Խէչան:

— Չէ, — ասում եմ: Ասում եմ ու մտածում, թէ սա ինչի է շուտ-շուտ հարցնում իմ նշանուելու մասին: Չլի մտքումս աղջիկ կայ ինձ տալու:

— Բա ի՞նչի համար, Խէչան, — ասում է, — էդպէս ամեն օր վառւած շուր ես ածում:

— Էնպէս էլի, — ասում եմ:

— Չէ, — ասում է, — Խէչան, քեզանում մի բան կայ:

— Ի՞նչ բան, — ասում եմ:

— Թագցնում ես, Խէչան, — ասում է, — դու անպատճառ սիրած աղջիկ ունես:

— Չէ, — ասում եմ. — աղջիկն ինչի՞ս է հարկաւոր, ինչ գլխովս եմ տալի: Ես մի ծառայ մարդ եմ, իմ գլուխը զօրով եմ պահում:

— Խի, — ասում է, — ծառայ մարդին կնիկ հարկաւոր չի: Թէ սիրեկան ունես, — ասում է, ինձ ասա ես գլուխ բերեմ:

Ես ամօթից գետինն եմ մտնում նրա էդ խօսքերից, համա նրա համար ոնց որ — հեչ...

— Դէ, — ասում է, — Թագցնիլ մի, թէ ունես՝ ասա... Ես գիտեմ, ասում է, դու սիրեկան ունես:

Ես երգւեցի հօրս գերեզմանով, իմ արևով, — չհաւատաց էն անհաւատ անհաւատի աղջիկը: Ասում է՝

— Սուտ ես ասում:

Երկինք, գետինք, ծով, ցամաք — էլի չհաւատաց:

— Չէ, — ասում է, — սուտ ես ասում:

Տեսայ որ էդպէս չի հաւատում — էլ բան չխօսացի:

էդ ժամանակ նա նորից երեսիս մտիկ արաւ ու ծիծաղեց:

— Բա կնիկ անել չե՞ս ուզում, — ասում է:

— Ինչ գլխովս եմ տալի:

— Աղաթ է, — ասում է, — որ մարդը կնիկ անի: Տե՛ս, — միրուքդ ու բեղերդ դուրս են եկել:

էս ասելով, նա ձեռը քսեց միրուքիս, բեղերիս ու կամաց ծիծաղեց: Ես ամօթից գետինը մտայ, համա բան չասի. միայն մի քիչ հեռու նստեցի նրանից: Էդ ժամանակ նա ոտքի կաղնեց:

— Դէ, Խէչան, — ասում է, — ես գնում եմ. դու շուուդ ածա, հեռւից կըլսեմ: Դու շատ լաւ ես ածում: Իսկը, — ասում է, — իմ աղպօր պէս ես ածում...

Ասաւ ու գնաց ծառերի արանքով:

Նրա գնալուց ետոյ ես երկար ժամանակ ինքս ինձ մտածում եմ նրա խօսքերի վրայ. մտածում եմ ու էն մասին, թէ ինչու նա մարդին քնացնում ու գալիս է ինձ հետ զրից անում:

«Բարի, հանաքչի կնիկ է, — ասում եմ ինքս ինձ: Ում տանը ծառայել եմ էսպէս բարի կնիկ չի եղել: Սա Աստծու հրեշտակ է, որ կայ: Մի խղճով կնիկ է, — ասում եմ, — որ նոքարին էլ բանի տեղ է դնում»...

էսպէս անցաւ մի քանի օր: Ամառ ժամանակ էր. առաւօտից գնում էի խոտհնձի, իրիկունը ջարդւած գալիս քնում: Ու ամեն իրիկուն, երբ տուն էի գալիս, աղիս կնիկը ինձ համար ճաշի կերակուրներից միշտ պահած էր ըլում, բերում էր առաջիս դնում:

— Կէր, տսում է, Խէչան, քեզ համար եմ պահել:

Ասում է ու ինքն էլ կողքիս նստում, մտիկ անում, թէ ոնց եմ ուտում: Շատ վախտ էլ, երբ մարդը տանը չէր ըլում, գդալ էր վեր ունում ու իմ ամանից ուտում:

— Ես հպարտ չեմ, — ասում էր, — Խէչան. ամենքի հետ էլ կերակուր կուտեմ: Իսկ քեզ հետ, — ասում է, — ես իշտահով եմ ուտում:

Ասում է ու ուտում գդալ-գդալի ետեից, իսկ ես աչքի տակով մտիկ եմ անում նրան ու ամօթից կարմրում: Մին էլ

մտածում եմ, եթէ մարդը տեսնի— ի՞նչ կասի: Համա նրա սկի վէճը չէր. միշտ էդպէս էր անում:

Մի օր էլ էդպէս հաց ուտելու ժամանակ վեր կալաւ թէ՛ — Խէչան, — ասում է, — ի՞նչ մեր տունն ես եկել — սիրունացել ես:

— Ես ի՞նչ գիտեմ, — ասում եմ:

— Ոնց թէ, — ասում է, — ես չեմ տեսնում. թշերդ կարմրել են նուա՛ն պէս: Աղջկերքը հիմի քեզ շատ կը սիրեն...

էս խօսքերի վրայ ես համ ամանչեցի, համ ծիծաղեցի:

— Ի՞նչ ես ծիծաղում, — ասում է, — եթէ ես էլ աղջիկ ըլէի, քեզ վրայ կը սիրահարւէի:

Ես գլուխս կախ արի:

«էս ինչեր է ասում», մտածում եմ:

— Հանաք եմ անում, Խէչան, — ասում է, — հանաք եմ անում...

Սսում է ու հետն էլ ծիծաղում, ձեռքը մէջքիս խփում, գդակս վեր ունում ու նորից գլխիս դնում... Ու էսպէս ամեն ժամանակ, երբ մարդը տանը չէր ըլում: Իսկ երբ մարդը տանն էր ըլում, ի հարկէ, էդպէս բաներ չէր անում:

էս էլ ասեմ, որ մարդը ցերեկները շատ քիչ էր տուն գալիս: Առաւօտը դուրս էր գնում իր գործին՝ առուտուրին, ճաշին գալիս էր, նորից գնում ու մին էլ իրիկունը կը գար՝ չայ կը խմէր ու հաւերի հետ կը քնէր: Քնած ժամանակն էլ էնքան պինդ էր քնում, ոնց որ օխտը տարւայ մեռել... Մի անգամ, լսւ միտս է, գիշեր ժամանակ եկան նրան կանչում էին: Քնած էր: Էդ օրն էլ, թարսի պէս, կնիկը տանը չէր, ես գնացի զարթեցնելու: Գոռում եմ, գոռում — տեղից ժաժ չի գալի: Էլի, էլի — ժաժ չի գալի... Տեսայ որ էդպէս է, ասի արի մի սրա ոտի տակը քորենք: Ու հենց մի երկու անգամ ձեռս քսեցի. մին էլ տեսայ գլուխը ժաժ տւեց. «հը՛, հը՛...» Հապան, էսպէս պինդ էր քնում նա... Դէ էսպէս քնող մարդն էլ ի՞նչ կիմանայ, թէ ինչ է կատարւում էս աշխարհում: Ասենք չքնէր էլ, ի՞նչ պտի իմանար...

էն էլ ասեմ, որ նա շաբաթը կամ երկու շաբաթը մի անգամ գեղերը կերթար պարտքեր հաւաքելու: Գեղացիները միշտ ալիւր, աղ էին տանում նրանից ու պարտք մնում. նա էլ գնում

էր պարտքերի տեղ ամեն բան բերում. էլ ոչխար, էլ մողի, էլ հաւ... Բերում էր լցնում տուն ու ծախում:

Մի անգամ էլ էսպէս, ամառ ժամանակ գնաց հեռու մի գեղ, էլի պարտքեր հաւաքելու, ինձ էլ ասաւ, որ տանը լաւ մտիկ տամ: Գնաց ու գիշերն էլ մնաց էնտեղ:

Ու հենց էդ գիշերն էր, որ պատահեց էս բանը:

II

Մի քիչ ամօթ է ասելը, բայց ինչ արած, քանի որ սկսել եմ, պէտք է վերջացնեմ: Ամենքի հետ էլ էդպէս բան պատահած կըլի, էնպէս որ ամաչելու բան չկայ:

Էդ ժամանակ, քանի որ ամառ էր, ես քնում էի դրսեր, ծառերի տակ: Մի քանի տախտակ էի դրել ու վրէն մի հին խսիր քցել: Ամառ ժամանակը, պէտք է ասած, լաւ է դրսեր քնել. համ հով է ըլում, համ էլ քունն անուշ է: Ես էդ տեղ քնում էի մին էլ նրա համար, որ ծառի գողեր չմտնեն... Լիրբ մարդիկ շատ. կը մտնեն—ինչքան չեն գողանալ, երկու էնքան ծառ կը ջարդեն: Մի խօսքով...

Էդ իրիկունն էլ, շատ աշխատելուց բեզարած, կիսահան-ւիլ մեկնւել էի քնելու. ու էն է քունը կոխում էր ինձ, անկարծ ոտի ձէն եմ լսում: Գլուխս բարձրացնում, ականջ եմ դնում: Մին էլ տեսնեմ ծառերի արանքին մի շաք երևաց, որ կամաց-կամաց մօտենում էր ինձ: Գիշերն էլ մութն է. ոչ աստղ կայ, ոչ լուսնեակ. էնպէս որ չեմ ջոկում ինչ շաք է դա:

«Էս ով պէտք է ըլի,—մտածում եմ.—Չի գլխիցը ձեռ վեր կալած գողի մինն է:—Մի առաջ արի, ասում եմ մըտքումս,—ես քեզ կասեմ, թէ ոնց են խնձոր գողանում»:

Համա չէ. արի տես որ բանից ուրիշ բան դուրս եկաւ:

Երբ եկողը լաւ մօտեցաւ, ինչ տեսնեմ—իմ աղի կնիկը՝ մի սև շալ գլխին ու ուսերին քցած: Հենց որ տեսայ նա է, էլ ձէն չհանեցի:

«Ինչի՞ պէտք է եկած ըլի»,—մտածում եմ ու աչքերս խուփ անում, միթամ թէ՛ քնած եմ:

Նա կամաց-կամաց, կատուի պէս, մօտեցաւ ինձ:

Ես շունչս պահած սպասում եմ: Ասում եմ տեսնենք ինչ պտի ասի:

Մի քիչ վախտ նա բան չխօսեց: Աչքերս խուփ լսում եմ

ոնց է շունչ քաշում: Միայն մի քիչ ետը կամաց, շատ կամաց ձենով հարցնում է ինձ.

— Խէչան, քնած ես, — ասում է:

Ես ձէն չեմ հանում: Էնպես եմ ձևացնում, թէ քնած եմ: Մտածում եմ — կամ աղն է պակաս կամ մաղը. — ով գիտի մի բան է միտն ընկել, եկել է վեր կացնելու: Ինչ էլ ըլի, ասում եմ, վեր չեմ կենալ. Վռազ բան կայ, թող մնայ առաւօտն անելու:

— Խէչան, — ասում է նորից, — քնած ես:

Էլի ձէն չեմ հանում:

— Խէչան, — ասում է, — քեզ եմ ասում, քնած ես:

Ասում է ու ոտս ժած տալի:

Ես խռմփացնում եմ:

— Խէչան, Խէչան, — ասում է առաջւայ պէս կամաց ձենով, ու էս անգամ էլ գլուխս է ժած տալի:

Տեսայ որ շատ զօհրա տարաւ, ասի տեսեմ ինչ է ասում. կարելի է մի բան է պատահել. տունը կրակ է ընկել կամ ով գիտի...

— Ի՞նչ է, — ասում եմ աչքերս տրորելով:

— Խէչան, — ասում է, — էսօր աղէդ տանը չի, ես մենակ եմ — չեմ կարում քնել. սատանաներից վախենում եմ սաստիկ...

«Ես ինչ կարամ անեմ, որ ինձ ասում է», մտածում եմ ինձ ու ինձ:

— Էհ, ես ինչ անեմ, ասում եմ:

Նա թէ՛

— Խէչան, հոգի ջան — ասում է, — շատ եմ վախենում: Գլխատակս սուր ու շամփուր եմ դրել, համա չի օգնում, էլի վախենում եմ: Արի, Խէչան, — ասում է, — մօտիկ քնի, կարելի է թէ չվախենամ...

«Էս ինչեր է ասում», մտածում եմ ու հարցնում.

— Մօտիկ ռոտեղ:

Թէ՛ մեր օթախներից մինում:

Ես բան չխօսացի. «Ոնց կըլի, — մտածում եմ, — ծառայ մարդը գնայ աղի օթախումը քնի»:

Նա էլ տեսաւ, որ քաշում եմ, սիրտ տւեց ինձ:

— Մի ամաչի, — ասում է. արի. թէ չէ սատանաները վրա կըտան, հոգիս դուրս կըգայ: Դէ, վեր կաց, հոգի ջան, ասում է, — քունս տանում է:

էսպէս աղաչանքով որ նա խօսեց, ես էլ մտածեցի, թէ դրուստ որ կնիկարժատ է, սատանաներից կը վախենայ... Քիչ չի պատահում, որ սատանաները կնիկարժատներին չանչում են կամ գիշերները փախցնում, տանում քարափների մէջ պահում... Մտածեցի էսպէս ինձ ու ինձ ու շինելս վեր կալայ գնացի:

Երբ մտանք տուն, նա դարձաւ ինձ.

— Գիտես, Խէչան, — ասում է, — ես սատանաներից շատ եմ վախենում: Հենց գիտեմ ծուռը ոտներով, երկար պոչերով դուրս են գալիս պատերի տակից ու ինձ վրայ տալի: Դու էլ վախենո՞ւմ ես, — հարցնում է ինձ:

— Ես հօ երեխայ չեմ, — ասում եմ, — որ սատանաներից վախենամ: Սատանան ի՞նչ բան է որ:

— Չէ, — ասում է, — Խէչան, մի ասի: Քրիստոսն Ինքն էլ սատանից վախենում էր:

— Բօշ բան է, — ասում եմ, — Քրիստոսը կարող էր վախենալ, իսկ ես չեմ վախենում:

էս խօսքերի վրայ նա ծածաղեց:

— Դու շատ սրտոտ ես, Խէչան, — ասում է:

— Ի հարկէ, — ասում եմ, — տղամարդը սրտոտ պէտք է ըլի:

Նա էլի ծածաղեց:

— Ինձ դուր է գալի, Խէչան, — ասում է, — որ դու էդպէս խօսում ես: Քեզ համար մի լաւ աղջիկ պէտք է ճարեմ, որ էդքան սրտոտ ես...

էսպէս խօսում էր նա դէսից-դէնից ու աչքերիս մտիկ անում, իսկ ես կարմրում էի ամօթից...

Վերջը, էլ ինչ երկարացնեմ, էդ գիշեր պատահեց է՛ն, ինչ որ շատ մարդու հետ պատահած կըլի...

Դրանից ետը նա էլի մարդին քնացնում, գալիս էր իմ կուշտը: Իսկ ես ամեն անգամ մտածում էի, որ վառ բան եմ անում, որ Աստուած չի ների ու մի օր դատաստան կանի... Մտածեցի մի անգամ վեր կենալ ու հեռանալ...

Բայց նա քանի գնում, տաքանում էր ինձ վրայ:

Ու մի օր էլ տեսէք, թէ ինչ է ասում:

III

Ամեն իրիկւայ պէս, էդ իրիկուն էլ իմ տախտի վրայ նստած էի, երբ եկաւ նա ու կողքիս նստեց: Նստել է ու խօսում է, հանաքներ է անում... Ես գիտեմ ինչի է եկել, ու մտածում եմ էլի, որ լաւ բան չեմ անում, որ իմ աղի կնկայ հետ էդպէս եմ: Էս բանն Աստուած չի ների ինձ, մտածում եմ:

Հիմի դուք կասէք թէ՝ Խէչանը սուտ է ասում. էդպէս ժամանակ, էդ տեսակ բաներ չեն մտածում... Համա, դրուստ եմ ասում, Քրիստոսի «առէք-կերէքը» վկայ,—մտածում էի: Շատ էլ ջահել էի, համա մտածում էի: Խելքը մենակ հօ մեծերին չեն տւել:

Էս մտքերի վրայ էի, մին էլ նա թեքւում է ինձ ու փսփսում կամաց:

— Գ' տես, Խէչան,—ասում է,—ես քեզ մի բան պէտք է ասեմ, թէ կատարես, էն է հօ կիմանամ որ տղամարդ ես:

— Ի՞նչ,—հարցնում եմ:

— Առաջ խօսք տուր, ասում է,—ետոյ կասեմ:

— Ի՞նչ բան է,—ասում եմ,—ասա, խօսք տամ:

— Ձէ, ասում է,—առաջ խօսք տուր, ետոյ ասեմ:

Ես ձէն չեմ հանում: Մթի մէջ նրա երեսը լաւ չեմ տեսնում, համա լաւ լսում եմ, որ նա շունչ քաշելով է խօսում:

— Դէ, խօսք տուր,—ասում է նորից ձեռս բռնելով,—խօսք տուր, որ ասածս կը կատարես...

Դէ, գիտէք էլի. ջահել տղայ, առանց լաւն ու վատը իմանալու, առանց դէս ու դէնի, տարայ ու բերի թէ՛

— Լաւ,—ասում եմ,—կը կատարեմ, դէ ասա տեսնեմ բանն ինչո՞ւմն է:

Նա մի քիչ սուս արաւ, ետոյ մօտեցաւ ինձ, կպաւ կողքիս ու կամաց, շատ կամաց ձէնով փսփսաց.

— Գիտես,—ասում է,—Խէչան, քեզ ինչ պէտք է ասեմ: Ասում է ու էլի ձէնը կտրում:

Իմ համբերութիւնը հատաւ:

— Դէ, ի՞նչ,—հարցնում եմ իրա պէս կամաց ձէնով:

Էս անգամ նա տարաւ ու բերեց, թէ՛

— Խէչան,—ասում է,—դու կարճս մարդ սպանես:

Ես վեր քաշւեցի:

— Խի, ձին հօ գլխիս քացի չի տուել, — ասում եմ:

Նա էլի մի քիչ ժամանակ ձէնը կտրեց:

— Իսկ քու օգտի համար կը սպանե՞ս, — հարցնում է:

— Ո՛չ իմ օգտի համար, ո՛չ էլ մի ուրիշ բանի համար ես մարդ չեմ սպանի, — ասում եմ, — մարդիկ ի՞նչ են արել ինձ, որ գնամ սպանեմ ու արնի մէջ ընկնեմ: Գլխիցս հօ ձեռ չեմ վեր կալել:

— Ձէ, — ասում է, — Խէչան, դու չհասկացար ի՞նչ եմ ասում:

— Դէ, հասկացրու, — ասում եմ:

— Օրինակի համար, — ասում է, — դու կուզե՞ս որ բախտաւոր ըլես

— Ինչո՞ւ չէ, — ասում եմ, — է՛ն որ սարսաղը բախտից կը փախչի:

— Դէ որ էդպէս է, — ասում է, — իմ ասածը կատարի բախտաւոր կըլես:

Ես նրա ասածից բան չեմ հասկանում:

— Բախտաւոր ըլելու համար, — ասում եմ, — մարդ պէտք է սպանել անպատճառ:

— Հա՛, — ասում է, — պատահում է, որ սպանում են: Ի՞նչ կայ որ:

Ես ուսերս վեր եմ քաշում:

— Օրինակի համար, — ասում է, — եթէ դու փող գտնես, քու ձեռիցը խլեն, խլողին չես սպանի՞:

— Ես էլ նրանից կը խլեմ, — ասում եմ:

— Իսկ եթէ չկարողանաս, — հարցնում է:

— Էդ ժամանակ, — ասում եմ, — ատամներով կը խեղդեմ:

Էս խօսքերի վրայ նա ծիծաղեց կամաց:

— Տեսնո՞ւմ ես, — ասում է, — տեսնո՞ւմ ես, որ սպանում են...

Ասում է ու հետն էլ խնդում:

— Դէ լաւ, — ասում է, — Խէչան հիմի դու ինձ է՛ն ասա — սիրո՞ւմ ես ինձ, թէ չէ:

Ես չգիտեմ ի՞նչ ասեմ: Դժար բան էր: Վերջը առանց երկար մտածելու ասում եմ.

— Դէ, ի հարկէ, դու իմ խաղէյնի կնիկն ես, հօ օտար չես:

Նա հեղացաւ:

— Է՛հ, — ասում է, — էլի չհասկացար: Քեզ հարցնում եմ — ինձ սիրում ես, թէ չէ:

Այ գիտի ջահելութիւն... Վեր կալայ թէ՛

— Հա՛:

Համա ասեմ ձեզ. ասի ու փոշմանեցի: Իսկ նա ուրախացաւ:

— Ուրեմն կուզե՞ս, — ասում է, — որ ես բախտաւոր ըլեմ:

— Ինչի չէ, — ասում եմ:

— Իսկ կուզե՞ս, որ երկուսս էլ բախտաւոր ըլենք, — հարցնում է նորից:

— Հա, — ասում եմ միամիտ:

— Դէ ուրեմն — ասում է, — իմ ասածը կատարի:

Ես էլի վեր քաշեցի:

— Մարդ սպանեմ, — ասում եմ:

— Հա, — ասում է, — չէ որ դու խօսք տւիր:

Ես մնացել եմ խաթի մէջ. բան չեմ խօսում:

«Շատ էլ խօսք տւի, մարդ սպանելու համար տւի, — մտածում եմ, — սա ինչ սորսաղ բաներ է խօսում»:

— Էդպէս ես ինձ սիրում հա, — ասում է, — էդ է քու տղամարդութիւնը: Վախկոտ...

Նա էս խօսքերն էնպէս ասաւ որ սրտիս դիպաւ: Ես — վախկոտ... Գեղի հօտաղները դողում են ինձանից, մտածում եմ, գիշերը թուրքերի գերեզմանների միջով մէրին եմ գնում, հիմի վախկոտ դառնայ... Ու ուզեցի նրան հասկացնել, որ իրա ասած տղէն չեմ. դրա համար էլ հարցրի, թէ ո՞ւմ է ուզում, որ սպանեմ: Ես ուզում էի նրա միտքն իմանալ:

— Խօսք տուր, — ասում է, — որ մարդու բան չես ասիլ:

— Չէ, — ասում եմ, — արևս վկայ. ասիլ չեմ:

— Երդում կեր, — ասում է, — հօրդ գերեզմանով:

— Հօրս գերեզմանը, էն սուրբ Աստուածածինը վկայ, — ասում եմ, — ասիլ չեմ:

— Դէ լաւ, — ասում է, — լսիր:

Ասում է լսիր ու ինքը խօսում չի:

Ու վերջը, գիտէ՞ք, ինչ ասաւ. մի էնպէս բան, որ իմ մտքով սկի չէր սնցնում:

— Կարաս, — ասում է, — Խէչան, մեր էս քօփակին... ազատենք դրանից...

Որ էս չասաւ, հենց իմանաս մի կուժ սառը ջուր գլխիս ածին. սառը քրտինքը ջանս պատեց, մնացի սառած: Էսքան տարւայ տղայ եմ, մի օր էդպէս էլած չեմ... Նա էլ տեսաւ որ սառայ, հարցրեց.

— Հը՛, ինչի՞ չես խօսում, — ասում է:

— Ի՛նչ խօսամ, — ասում եմ, — էդպէս բան ո՞նց կըլի. վերեւ Աստուած կայ...

Սարսաղ, — ասում է, — Աստուած ի՞նչ գործ ունի էդտեղ: Մարդիկ տէրտէր են սպանում, չեն վախենում...

— Չէ, — ասում եմ, — ես էդ բանը չեմ անի. զուր տեղը անմեղ արին չեմ ընկնի, որ հոգիս դժոխքը գնայ:

Նա տեսաւ, որ իրան ասածը չելաւ, կողքիցս մի քիչ հեռու նստեց ու, մթի մէջ պսպղացող աչքերով, մտիկ է տալի ինձ: Իսկ ես ձէն չեմ հանում. ոչ էլ մտածում եմ: Էնպէս եմ կարծում թէ կողքներին մարդիկ կան կաղնած ու մեր խօսքերն ու մտքերը գրի են առնում:

Էսպէս մի քիչ ժամանակ երկուսս էլ բան չխօսեցինք: Վերջը էլի նա սկսեց:

— Ինչպէս երևում է, Խէչան, — ասում է, — դու տղամարդ չես. հաւի սիրտ ունես...

Նա երկար խօսում էր էսպէս (որ մինը յիշես). շատ բան ասաւ, շան լափը թափեց գլխիս, իսկ ես, լեզուս ատամներին արանքը դրած, ձէն չեմ հանում:

— Ուրեմն, Խէչան, — ասում է, — դու ինձ չես սիրում:

Իսկ էլի ձէն չեմ հանում:

— Որ սիրէիր, — ասում է, էդպէս չէիր անի: Մարդ իրա սիրածի համար ամեն բան անում է:

Էստեղ ես վրայ բերի.

— Ամեն բան կանեմ, ասում եմ, — համա էդ բանը չեմ անի:

— Խի՞, — ասում է:

— Էնպէս, — ասում եմ, — մեղք է:

— Ոչ թէ էդ, — ասում է, — դու վախենում ես:

— Ոնց չվախենալ, — ասում եմ, — վերեւ Աստուած կայ, ներքեւ դատաստան. դիւան կը գայ, դէ արի ջուղաբ տուր...

— Հաւ, լաւ, — ասում է, — շատ մի խօսա...

Էս ասելով, նա վեր կացաւ. տեղից, մի քիչ տեղ գնաց ու էլի ետ եկաւ: Եկաւ առաջիս կաղնեց ու խնդում է:

— Խէչան, — ասում է, — ինչ որ քեզ ասեցի — հաւատացի՞ր:

— Հա, — ասում եմ միամիտ:

Նա ծիծաղեց:

— Սարսաղ, — ասում է, — ինչ միամիտն ես եղել: Ես հա-
նաք արի. քեզ ուզում էի փորձել... Մարդու բան չասես...

— Հօ գժւել չեմ, — ասում եմ, — ես էլ գիտեմ, որ շիտակ
չես ասում...

Էդ գիշեր, նրա գնալուց ետը, ես տեղիս մէջ երկար մը-
տածում էի նրա ասածների վրայ:

«Խելառ Խէչան, — ասում եմ ինձ ու ինձ. — տես՞ր ինչ
օյին բերեց գլխիդ... Դեռ էնքան միամիտ ես, որ հանաքն ու
շիտակը չես ջոկում իրարից. քիչ ֆնաց հաւատայիր...

Մտածում եմ մին էլ էն մասին, թէ եթէ դրուստ ասէր
ու ես էլ շաշի պէս գնայի սպանէի խեղճ մարդին, էն ժամա-
նակ ինչ կանէին ինձ. — Սիբիր կը դարկէին ու պառաւ մէրս
իր աղջկերանցով հողը գլխին կը տար...

Բայց, փառք Իրան, որ էդպէս բան չպատահեց...

IV

Ասած է՝ «ինչ մտանես — էն գտանես»: Հին խօսք է, լաւ
միտք ունի: Հին մարդիկ լաւ խօսքեր ունեն...

Էդ օրւանից անցաւ մի ամիս, թէ աւելի, լաւ միտս չի.
համա լաւ յիշում եմ, որ սուրբ Խաչի շաբթին էր. աշտարա-
կեցիք էլ բեռներով խաղող էին բերել ծախելու:

Նա էլի առաջւայ պէս, գիշերները մի-մին գալիս էր իմ
կուշտը ու գնում: Ես էլի միշտ էն էի մտածում, որ լաւ բան
չեմ անում, որ Աստուած չի ների ինձ...

Էսպէս, ոնց որ ասի, սուրբ Խաչի շաբթին, մի օր աղա
Ակոբը հիւանդացաւ անկարժ: Օրերը դեռ մի քիչ շոք էին.
շաւերն ասում էին, որ խուերա է ընկել. փորը ցաւում էր ու
սիրտը խառնում: Ինչ արին օգուտ չարաւ: Հիւանդանալու
էքսի օրը խեղճը մեռաւ: Թաղեցին նրան գեղական կարգով,
ոնց որ վայել է մի վաճառական մարդու... Երեք տէրտէր
եկաւ, երկու տիրացու, ու էնքան էլ բազմութիւն կար, որ
անչափ... Մինչև անգամ տանուտէրն էլ եկել էր (ողորմի՛ քեզ
Ալէքսան-բէգ...)

Թաղելու օրից չանցաւ մի երկու օր, գեղի մարդիկ սկսե-

ցին հայ էս, հայ էն. բա չես ասի—աղա Ակոբը իրա մահով չմեռաւ, նրան դեղել էին... Սաղ գեղը լեզու առած հենց էդ է ասում, թէ՛ աղա Ակոբին դեղել էին:

«Ո՞նց թէ, միտք եմ անում,—ո՞վ պէտք է նրան դեղէր, կամ ինչի՞ համար»... Միտք եմ անում, միտք, ու բան չեմ հասկանում: Սրան եմ հարցնում, նրան եմ հարցնում.

— Էդ որտեղից իմացաք, ասում եմ, որ դեղել են. կամ ի՞նչից գիտէք, որ դեղած էր:

— Բա, — ասում են, — որ գլխի մազերը թափւում էին, էն ի՞նչից էր:

Էնքան խօսեցին կապէս որ բանը հասաւ քննութեան:

Մի օր էլ տեսնենք վերից երկու մեծաւոր մարդ եկան՝ դեղին կոճակներով, բանով... Մինը՝ ասին, քննիչն է, մէկէլը՝ բժիշկը:

Դրանք եկան ու տանուտէր Ալէքսան-բէգի տանը վեր եկան: Էդտեղ հաց կերան, չայ խմեցին ու քիչ ետը Ալէքսան-բէգի հետ գնացին գերեզմանատուն, որ աղա Ակոբին հանեն գերեզմանից ու տեսնեն՝ ղեղա՞ծ է, թէ չէ:

Էդ որ իմացայ, ես էլ գնացի: Գնացի, համա մօտ չթողին: Բայց երբ բժիշկը ամեն բան վերջացրեց, ասաւ որ դըրուստ դեղած է:

Մինչև էդ ժամանակ ես հաւատում չէի, որ դեղած ըլի. համա որ բժիշկն ինքն էլ ասաւ—դեղած է, նոր հաւատացի...

Դէ հիմի եկէք իմացէք, թէ ո՞վ է դեղել:

Հայ դէս, հայ դէն... Ու սկսեց մի մեծ քննութիւն: Կանչեցին սրան, նրան. կանչեցին աղա Ակոբի կնկանը: Կանչեցին ինձ... Որ իմ անունը տւին, հենց իմանաս տաք ջուրը գլխիս ւծին:

«Ինձ ինչի՞ են կանչում, մտածում եմ, ես ինչ մեղք ունեմ էստեղ: Կոմիս ուտի Կարապետը, ջառմէն քաշի Հայրապետը... Չէ,—ասում եմ,— Խէչան, քու բանը բուրդ է, քու բանը պրծաւ... Որ քեզ ասում էի էդպէս շնութիւն մի անի, Աստուած չի ների. տեսա՞ր որ չներեց...»

Մտածում եմ կապէս ու դողում: Մտածում եմ էլի Սիբիրի մասին... Մի խօսքով էդ սաղ գիշերը քունս չտարաւ. ահից ու դողից միտքն ինձ տարաւ:

էքսի օրը, քննութիւնից առաջ, աղա Ակոբի կնիկը կան-
չեց ինձ իրա մօտ:

— Դու,—ասում է,—Խէչան, ի՞նչ պէտք է ասես քննիչին:

— Ի՞նչ գիտեմ,—ասում եմ,—է՛ն էլ պէտք է ասեմ էլի:

— Այսինքն ի՞նչ,—ասում է:

Ասում է ու վախեցած աչքերիս մտիկ անում: Կարծում
է թէ ուրիշ բաներ պտի ասեմ:

— Պէտք է յայտնեմ,—ասում եմ,—որ ես բան չգիտեմ.
միայն էսքան եմ իմանում, կասեմ, որ հիւանդ ժամանակ ա-
ղի փորը ցաւում էր:

— Հա,—ասում է,—էդպէս էլ ասա: Ես էլ էդքան պտի
ասեմ: Իսկ բան է,—ասում է,—եթէ հարցնեն աղէդ ու կնի-
կը իրար հետ ռնց էին ապրում, ասա՛՛ ոնց որ կարգն է, էն-
պէս էլ ապրում էին...

— Ի հարկէ,—ասում եմ,—ուրիշ էլ ի՞նչ պտի ասեմ: Ու
դրուստ որ կարգին էին ապրում. մի օր չտեսայ կուէին իրար
հետ: Ուրիշ մարդ ու կնիկ շատ եմ տեսել, որ իրար գլուխ
են պոկում, իրար չանա են կռծում ու շաբաթներով, ամիս-
ներով խռովում իրարից, համա նրանք՝ ամենեւին... Նա նրան՝
«այ մարդ», նա նրան՝ «թամար ջան»...

Վերջը, ինչ երկարացեմ, գնացինք քննութեան: Սիրտս
էլ էնպէս է դողում, էլ դու պրծա՛ր... Բոլորիս էլ հաւաքել են
դատարանի մի օթախում ու ջոկ-ջոկ կանչում են հարց ու
փորձի:


Ամենից առաջ կանչեցին աղա Ակոբի կնկանը: Երկար
քննեցին նրան ու բաց թողին: Երբ նա դուրս եկաւ, երեսը
պատի ծեփ էր դառել ու աչքերն էլ թաց էին: Նրան որ տե-
սայ էդպէս, սիրտս դող ընկաւ: Մտքումս ասի՝ ինձ աւելի պտի
տանջեն, շան որդիք:—Քու բանը բուրդ է, Խէչան, ասում եմ.
— կուժն ու կուլէն քու գլխին պտի կոտրեն. ինքդ խեղճ մարդ,
նրանք--ռուս, ո՛չ խօսքներն ես հասկանում, ո՛չ լեզուն, ան-
լեզու սարի անտսուն. ինչ ուզենան կանեն քեզ, ոչ տէր ունես,
ոչ տիրական...

Էս մտքերի վրայ էի, մին էլ թէ՛

— Խէչան Պօղոսով:

— Ես եմ,—ասում եմ:

Թէ՛ արի նեքսե:



Գնացի: Սիրտս էլի էնպէս է դողում, կասես թէ կախելու են տանում:

Նեքսե երեք մեծաւոր մարդ էր նստած: Մինը գրում էր, երկուսն էլ խօսում էին իրար հետ: Երբ ես նեքսե մտայ, ամենից մեծը մտիկ արաւ ինձ ու ասաւ.

— Խէչան Պօղոսով տի՞:

Մթամ ասում է՝ Խէչան Պօղոսովը դ՞ո՞ւ ես:

Ես գլխով արի, թէ՛ ես եմ:

— Պա-ռուսկի զնայի՞շ, — ասում է:

Մթամ ասում է՝ ռուսերէն գիտե՞ս:

Ես գլուխս ժաժ տւի թէ՛ չէ:

Էդ ժամանակ նա սկսեց կողքի մարդի հետ խօսել: Համ խօսում է, համ ինձ մտիկ անում, ձեռը դէպի ինձ է մեկնում: Ես էլ (ոտքերս տակիս դողում են) ասում եմ—տեսնենք ոնց պտի վերջանայ:

Նա որ իրա խօսելը վերջացրեց, մէկէլ մեծաւորը երեսը շուռ տւեց ինձ վրայ ու հայերէն հարցրեց:

— Դու, — ասում է, — Ակոբ Օհանովի ծառան ե՞ս:

— Այո՛, — ասում եմ:

— Քու խաղէյինը, — ասում է, — գիտե՞ս ինչից մեռաւ:

— Ես ի՞նչ իմանամ, — ասում եմ, — աղա. ես մի ծառայ մարդ եմ...

Նա «հը՛մ» արաւ ու սկսեց մեծ քննչի հետ խօսել ռուսերէն, ետոյ երկուսն էլ պիսրին ասեցին, որ իմ ասածը գրի:

Էդ որ տեսայ, ասի՝ բանս խարաբ է. որ գրւեց պրծաւ:

— Իսկ քանի՞ օր հիւանդացաւ խաղէյինդ, — հարցնում է էն հայը նորից:

— Մի օր, — ասում եմ:

— Ի՞նչն էր ցաւում, — ասում է:

Ասում է ու աչքերիս միջին մտիկ անում: Համա Խէչանը էնքան էլ երեխայ չի, որ շփոթւի: Խէչանը գիտի թէ ինչ պտի ասի:

— Ամօթ չըլի ասելը, — ասում եմ, — փորն էր ցաւում, աղա:

— Իսկ հիւանդանալու առաջի օրը ռրտեղ էր ճաշել, — հարցնում է:

— Էդ բանը ես գիտեմ ոչ, աղա, — ասում եմ. — ես էդ օրը մէրին էի գնացել:

Նա նորից «հըմ» արաւ ու քննիչի հետ ուղսերէն խօսեց, ետոյ էլ իմ ասածը գրել տւեց: Նրանք խօսուած են, իսկ իմ սիրտը դողում է ուռի տերևի պէս... Քննիչն ասում էր՝ «դա՛, նիմնոժկա»: իսկ հայն ասում էր. «նեա, նի զնայիտ»... Տեսնում եմ, որ քննիչն ասում է՝ մի քիչ մեղաւոր է, իսկ հայն էլ ասում է՝ չէ, մեղաւոր չի...

Նա՛ հա՛, նա՛ չէ. նա՛ հա՛, նա՛ չէ. վերջը էդ հայը (Աստուած նրան կեանք տայ եթէ կենդանի է, իսկ եթէ մեռած է՝ ողորմի հոգուն) դարձաւ ինձ ու ասաւ.

— Գնա:

Որ էդ չասաւ, ոնց որ մի ծանր բեռ ուսերիցս վեր ունեն: Դուրս եկայ ու ասում եմ՝ «փառքդ շատ, Աստուած, Դու չես թողնի, որ անմեղ տեղը մարդ կորչի»... Բայց պատահում է, որ անմեղ մարդիկ շատ են կորչում, անտէր ըլելու պատճառով... Ու եթէ, ասում եմ ձեզ, էն հայը չըլէր, ինձ դուզ Սիբիր կը քշէին, հողէց հողի կը կորչէի: Ո՛վ էր հարցնողը մեղաւոր ես, թէ չէ...

Էս քննութիւնից մի ամիս ետը, նոր փորձանքի մէջ չընկնելու համար, ես սուս ու փուս վեր կացայ ու հեռացայ աղա Ակոբի տնից: Իսկ նրա կնիկը, դեռ տարին չբոլորած, մի ջահիլ մարդ արաւ տան վրայ...


Հիմի դուք կը հարցնէք թէ՛ «ո՞վ էր դեղել»:

Էդ բանը, պէտք է ասեմ, մինչև էսօր էլ չիմացան: Շատերն ասում էին թէ ընկեր մարդիկ են դեղել. մի քանիսն էլ, թէ ինքն է դեղ կերել: Իսկ թէ ինչի՞ համար է նա իրա դեղել, էդ սկի չէին ասում... Նա ինչի՞ պտի դեղ ուտէր, հարցնում եմ, քանի որ, փառք Իրան, տունը լիքն էր ամեն բանով. հացը չէր պակաս, ջուրը չէր պակաս:

Մինչև էսօր էլ, մեղքս ինչ թագցնեմ, միտքս տանջում նրա կնկայ վրայ... Թէ չէ, միտք եմ անում, նա ինչի՞ պէտք է դեղէր իրան... Միտք եմ անում, միտք, ու բան չեմ հասկանում:

Է՛հ, ինչեր ասէք, որ չի պատահում աշխարհում...

ՍՏ. ԶՕՐԵԱՆ



ԵԹԷ ԶԸԿԱՅ ԱՍՏԻԱԾ...

I

Սրտակէզ կսկիծ մի հին,
Որ անդուլ սարդի նըման
Հիւսել է հըրէ ոստայն՝
Մաշում է յար իմ հոգին.
Ու որպէս անդեղ մի ախտ,
Հին ցաւ մի թունոտ մի խոց
Մըթամած, ազահ մի բոց
Կիզում է կեանքըս անբախտ
Գնում եմ ուղին իմ ծուռ
Եւ գիտեմ՝ դէպի կորուստ. —
Նիշւած է բախտըս վերուստ
Եւ չըկայ փրկութեան դուռ...

II

Ամենասիրելի Լիլիտին

Երկու դժբախտ մանուկ,
Երկու երկչոտ ուրու, —
Նետւած ենք մենք անօգ—
Երկրում հեռո՛ւ, հեռո՛ւ.
Մութ հողմերին աւար
Երկու տերև փոխը,
Անտառներում խաւար
Ուղիներում ոլոր. —
Որք սիրտը մեր-ահից,
Ով մեր հոգին խոցւած
Պիտի փրկէ մահից,
Եթէ չըկայ Աստուած...

Վահան Տէրեան



ԿԱՐՊ ԿԱՐՊԻՉԸ

Կարպ Եգորիչը մեռաւ 18... թւին, մայիսի 9-ին, իսկ նրա մահից երկու ամիս յետոյ, Կարպ Եգորիչի կինը ծնեց մի տղայ և անունը՝ հօր յիշատակը վառ պահելու համար դրին Կարպապետ:

Փոքրիկ Կարպապետը մեծացաւ-մեծացաւ ու դարձաւ Կարպ Կարպիչ: Եւ այդ Կարպ Կարպիչի մասին է, որ պիտի պատմեմ:

Նրա մանկութիւնն անցաւ շատ անգոյն: Քաղաքային դպրոցում, ուր նա սովորում էր և որը վերջացրեց, չափազանց աշխատասէր, բայց շատ սահմանափակ ընդունակութեան տէր աշակերտներից էր համարւում:

Ուսուցիչները սիրում էին նրան աշխատասիրութեան, համեստութեան համար. վարքը միշտ 5+ էր:

Սուսիկ-փուսիկ, առանց արկածների անցաւ նրա մանկութիւնն ու պատանեկութիւնը:

Քաղաքային դպրոցը վերջացնելուց յետոյ, նրա համար պաշտօն յաջողեցրին քաղաքային վարչութեան մէջ, ամսական քսան ռուբլով:

Զգեստները փոխեց, այլևս աշակերտ չէր, այլ քաղաքային վարչութեան մէջ ծառայող:

Այստեղ էլ նրան սիրեցին, ինչպէս ուսումնարանում, այստեղ էլ նա մնաց նոյն համեստ ու խոնարհ տղան:

Բայց իսկապէս ես շեղւում եմ իմ բուն նպատակից: Նրա մանրամասն կենսագրութիւնը չէ, որ ուզում եմ պատմել, այլ մի դէպք նրա կեանքից, որը քիչ էր մնացել ինքնասպանութեան հասցնէր նրան:

Արդէն մի քանի տարի էր, որ նա ծառայում էր քաղաքային տանը: Քսան ռուբլի ռոճիկը հասել էր եօթանասունհինգի: Ունէր իւր ստորադրեալները, որոշ դիրք, ապահով ռոճիկ և փոքրիկ տուն, որը մօր մահաւանից յետոյ էր ժառանգել:

Այդ գաւառական քաղաքում ապրելու համար, նա ունէր այն բոլոր յարմարութիւնները, որը նրան իրաւունք էր տալիս մտածել ամուսնութեան մասին:

Թէև այդ բանը ոչ ոքի չասաց, բայց ինքը շարունակ աչք էր ածում, մի լաւ հարսնացու գտնելու:

Բայց այդ մտադրութիւնը երևի մտադրութիւն էլ կը մնար և նա կը մնար ամուրի, ոչ ոքի էլ առաջարկութիւն չէր անի, վախենալով մերժել, եթէ բախտը, որ միշտ սուերի պէս նրա հետ էր՝ չօգնէր:

Մի կիրակի, քաղաքային այգում նա հանդիպեց Գերասիմ Մինայիչին, որին նա ամենայն խոնարհութեամբ բարևեց: Դա քաղաքային վարչութեան մէջ շատ հին ծառայողներից էր, որից կարպ կարպիչը միշտ քաշւում էր և մի առանձին յարգանք տածում:

— Բարև, կարպ կարպիչ, — մեկնելով ձեռքը և ժպտալով ասաց Գերասիմ Մինայիչը:

— Յարգանքներս Գերասիմ Մինայիչ, — ի՞նչպէս էք:

— Շնորհակալ եմ, դուք ի՞նչ էք անում, զբօսնում էք: Մենակ, միշտ մենակ, լաւ չէ, լաւ չէ կարպ կարպիչ, մենակութիւնը ուտում է մարդուն:

— Ինչ արած Գերասիմ Մինայիչ, թուղթ չեմ խաղում, չեմ խմում, որ ընկերներ ունենամ:

— Այդ լաւ է, ապրես, շատ ապրես: Քիչ են հիմա լաւ, խելքը գլխին երիտասարդներ... Ապրես, սիրում եմ խելօր, պատիւ ճանաչող երիտասարդներին, այժմեան երիտասարդները, բոլորն էլ թուկից փախած շալապայներ են:

— Դուք գնում էք, Գերասիմ Մինայիչ, — այգու դռներում հարցրեց կարպ կարպիչը դանդաղացնելով քայլերը:

— Ես գնում եմ և ձեզ էլ տանում եմ հետս: Այսօր դուք մեզ մօտ էք ճաշում. կինս, աղջիկս, շատ ուր սխ կը լինեն:

Կարպ կարպիչը իրեն բոլորովին կորցրեց, կարմրեց մինչև ականջները. ինչպէ՞ս, ինքը Գերասիմ Մինայիչի մօտ ճաշի... Նրա կինը, աղջիկը, որն այնքան սիրուն է, հպարտ. մի վայրկեանում հազար ու մի բան անցաւ նրա գլխովը, ուղեց փախչել, գետնի տակն անցնել...

Այդ լոպէին Գերասիմ Մինայիչը մօտ կանչեց կառքը և նստեց:

— Ես, Գերասիմ Մինայիչ... Մի ուրիշ անգամ. ես շատ շնորհակալ եմ...

— Նստիր:

Նա գուցէ շատ չեմ ուզում անէր, եթէ այդ կարճ «նըստիր»-ը, նրան չստիպէր լուռ հպատակել:

Ամեն կիրակի Կարպ Կարպիչը ճաշի էր Գերասիմ Մինայիչի մօտ:

Թէ Գերասիմ Մինայիչը, թէ կինը և թէ Օլգա Գերասիմովնան շատ լաւ էին վերաբերւում: Սկզբները Կարպ Կարպիչը շատ քաշւում էր, բայց կամաց-կամաց ընտելացաւ և նոյնիսկ մինչև ականջները սիրահարւեց Օլգա Գերասիմովնայի վրայ, որը մօտ 19 տարեկան, շիկահեր, կապտաչեայ աշխոյժ աղջիկ էր:

Երեք ամիս չանցած Օլգա Գերասիմովնան և Կարպ Կարպիչը ամենաերջանիկ ամուսիններ էին: Օլգան ամբողջ օրը քնքշում էր, իսկ Կարպ Կարպիչը երջանկութիւնից պատրաստ էր երեխայի նման թռչկոտալ:

Մեղրամիսը անցկացնելուց յետոյ, Օլգա Գերասիմովնան սկսեց մտածել իր ամուսնու դաստիարակութեան մասին:

Նա դեռ նշանակւած ժամանակն էլ և առաջ էլ նկատել էր, որ Կարպը չի հագնւում այնպէս, ինչպէս պէտք էր. որ ձեւերը աստ պարզ ու գոեհիկ են, չգիտէ իր դիրքին վայել պահել իրեն, բոլորին առաջինը ինքն է բարեւում. և մի շարք պակասութիւններ, որոնց Օլգան վճռել էր ուղղել:

Կարպ Կարպիչն այստեղ էլ չդաւաճանեց իր բնաւորութեան և հլու, հնազանդ հետեւում էր կնոջ բոլոր խորհուրդներին:

Առանց վէճերի, խաղաղ ու հանգիստ սահում էր երիտասարդ ամուսինների կեանքը: Երկու բան կար, որոնք երբեմն մթնեցնում էին նրանց ուրախ օրերը:

Առաջինը Կարպը շատ էր ուզում երեխայ ունենալ, իսկ Օլգան լսել անգամ չէր ուզում և յաճախ խօսակցութիւններ էին տեղի ունենում նրանց մէջ:

Երկրորդ պատճառը առաջինի նման լուրջ չէր, բայց առաջինից աւելի էր տեղիք տալիս խօսակցութիւններին:

Բանը նրանումն էր, որ Օլգա Գերասիմովնան դադարել է

առաջւայ պէս շարունակ նկատողութիւններ անել ամուսնուն հագնելու, բարեկերու և առհասարակ բոլոր արտաքին ձևերի մասին. Բայց վերջին ժամանակները նա սկսել է ամենալուրջ ուշադրութիւնը դարձնել ամուսնու փողպատների վրայ:

Մի օր նա դէն ձգեց ամուսնու մէկ նոր, երկու կիսամաշ սև փոքրիկ բանտի ձևով կապած փողպատները և նոյն օրը գնեց վեց հատ զանազան գոյնի փողպատներ և ինքը իր ձեռքով երկար չարչարւեց մինչև կապեց: Հիւանդութեան նման անսպասելի սկսւեց այդ թուլութիւնը դէպի գոյնզգոյն մետաքսի այդ կտորները:

Ամուսինը ծիծաղում էր համարելով այդ էլ նոր տեսակի քմահաճոյք: Եւ լուռ սիրոյ այն ձևի արտայայտութիւնը թոյլ էր տալիս, որ ինչպէս ուզում է, ինչ գոյն հաւանում է, այն էլ կապի:

Ամեն առաւօտ, թէյից յետոյ, մի քանի անգամ Օլգա Գերասիմովնան կապում քանդում էր, մինչև գոհ մնալով կապւածքից, համբուրում էր ամուսնուն ու այնպէս ճանապարհ դնում ծառայատեղի:

Շաբաթը մի անգամ, կիրակի օրերով նրանց մօտ ճաշի հիւր էր Կարպի պաշտօնակից, իսկ Օլգայի հեռու մի երիտասարդ ազգական, որ ամողջ քաղաքում յայտնի էր որպէս ուրախ, քէֆեր սիրող ու վերջին տարազով հագնւող մի ֆրանտ:

Կարպ Կարպիչը շատ էլ չէր սիրում այդ մարդուն, բայց ստիպւած սիրալիր էր, վախենալով վիրաւորել կնոջը:

Երբեմն նրանք երեքով գնում էին կառքով, քաղաքից դուրս զբօսանքների և Սերգէյ Խրիստոֆորովիչը (այդպէս էր նրա անունը), երբեք չէր թողնում որ Կարպ Կարպիչը վճարի կառապանին:

Երևի այդպէս հանգիստ էլ կանցնէր Կարպ Կարպիչի կեանքը, եթէ մի դէպք, քաղաքային վարչութեան մէջ, այնպէս չցնցէր նրան և զանազան կասկածների տեղիք չտար և վերջը, այդ կասկածները չդառնային դառն իրականութիւն:

Բանը ահա ինչպէս էր:

Մի երկուշաբթի Կարպ Կարպիչը նոր էր անցել իր սեղանի գլուխը. ծառայողներից դեռ շատ քչերն էին եկել. այդ բոլորին ներս մտաւ ըստ սովորութեան Սերգէյ Խրիստոֆորովիչը մի կեղծ ժպիտ դէմքին:

— Բարի լոյս, Կարպ Կարպիչ, ի՞նչ նորութիւնս:
 — Բարի լոյս, ոչինչ չկայ:
 — Ի՞նչպէս է Օլգա Գերասիմովնայի առողջութիւնը, վաղուց է չեմ տեսել:

— Շնորհակալ եմ, լաւ է, բայց մի բան լաւ չէ,— ծիծաղելով ասաց Կարպ Կարպիչը,— որ փողպատների այդքան շատ փող է տալիս:

Դարձեալ գնացել է երկուսը գնել: Տեսէք, հաւանում էք՝ նորն է:

— Ի՞նչ կայ որ, թող դա էլ նրա պակասութիւնը լինի,— ծիծաղելով նա շօշափեց փողպատի ծայրը,— շատ լաւն է, շատ ճաշակով,— ասաց նա ու ուրեք իր մկան պոչի նման սուր բեխերի ծայրերը:

— Ի հարկէ, ես հօ բան չեմ ասում, սիրում է, դէ, չի իմանում ի՞նչ անի, որ սիրտս շահի... Քանի տարի է պսակւած եմ և օր օրի վրայ աւելի ենք սիրում իրար:

— Աստուած տայ միշտ էլ սիրով մնաք... Դարձեալ ուշացել է,— աչքը դէպի դատարկ աթոռը դարձնելով, ասաց նա մի շար ժպիտով:

— Հա, շատ է ուշանում:

— Դուք, Կարպ Կարպիչ, թոյլ էք, նա էլ գլխներիդ է նստում, դրան պէտք է հուպ տալ, որ ճանաչի իր տեղը:

— Ի՞նչ անեմ եղբայր, նկատողութիւն անում եմ, խընդրում եմ, հրամայում եմ, ոչինչ չի օգնում, իրա էջն է քշում. նրա պատճառով ես եմ նկատողութիւն ստանում:

— Ապա թող ինձ հետ այդպէս վարւի: Գիտէ որ բարի ես և օգտւում է: Ես ձեր տեղը լինեմ, մի օր չի մնայ տեղում, իսկոյն դուրս կը թռչի. շատ աներես մարդ է, կոպիտ, անքաղաքավարի, ոչ մեծ է ճանաչում, ոչ փոքր... Պէտք է հուպ տալ: Իսկ Կարպ Կարպիչ, ի՞նչ ստախօսն է, Աստուած ազատի, այնպիսի ստեր կասի, որ բերանդ բաց կը մնայ... Փչում է, փչում...

Բայց դուք առաջ լաւ ընկերներ էիք...

— Այո, առաջ լաւ չէի ճանաչում, իսկ այժմ,— խօսքը գեռ չվերջացրած նրա աչքերը ընկան դռան մէջ կանգնած իր պաշտօնակցին, որի մասին խօսում էր. ուղեց խօսքը փոխել, կմկմաց, բայց արդէն ուշ էր:

— Շարունակեցէք, լաւ ճանաչեցիք... Ինչո՞ւ լռեցիք, շարունակեցէք:

— Այո՛, որ դուք կոպիտ էք ես հազար անգամ կը կրկնեմ:

— Հէ՞նց այդ:

— Ես աւելորդ եմ համարում խօսել ձեզ հետ:

— Ինչո՞ւ, լաւ տեղն է:

— Ես գործ ունիմ, — ասաց նա, երեսը դարձրեց և ուզեց գնալ:

— Ոչինչ, չէք ուշանալ, — թևից բռնելով կանգնեցրեց:

— Ի՞նչ էք ուզում:

— Վաղուց է ուզում էի, որ մենք երեքս՝ Կարպ Կարպիչը դուք և ես մի խօսէինք:

— Ի՞նչի մասին:

— Իսկոյն կասեմ:

— Խնդրեմ թողէք թևս, տեղը չէ:

— Շատ լաւ տեղն է: Ես ձեր երեսին ասում եմ, որ դուք ստոր մարդ էք: Բաւական չէ, որ դուք ամեն տեսակի ստորութիւններ անում էք, դեռ սրա-նրա մօտ էլ պարծե-նում էք...

— Դա ձեր գործը չէ: Ես չեմ էլ ուզում խօսել ձեզ հետ այդ...

— Բայց ես ուզում եմ խօսել և բանալ Կարպ Կարպիչի աչքերը, որ նա մի լաւ թքի ձեր անամօթ երեսին:

— Խնդրեմ չափը չանցկացնէք:

— Օհօ՛, սպառնում էք:

— Պարոններ, պարոններ, թողէք ամօթ է, կըլսեն, — մէջ մտաւ Կարպ Կարպիչը:

— Այսօր Կարպ Կարպիչի փողպատը կանաչ գոյնի է, դէ, պարոն լեզւագէտ, այդ ի՞նչ է նշանակում:

Սերգէյ Խրիստոֆորովիչը կարմրեց, կարմրեց ու ոչինչ չասաց, աւելի լաւ համարելով լռել, որ հակառակորդին աւելի չգրգռի...

— Հը՛, ի՞նչո՞ւ լռեցիք, թէ՛ ձեռնտու չէ... Վախկոտ... Սրի-կայ...

— Ձայնդ կտրիր, թէ չէ շան սատակ կանեմ...

— Ապա փորձիր մօտենալ:

— Ես քեզ ցոյց կը տամ. այստեղ տեղը չէ:

— Շատ լաւ տեղն է. ասա, ասա, ի՞նչ է նշանակում այս գոյնը... Այսօր ռրտեղ պիտի հանդիպէք...

Սերգէյ Խրիստոփորովիչը որ մինչև այդ լուռ եղունգներն էր կրծոտում, յանկարծ կատաղած յարձակեց նրա վրայ... Կարպ Կարպիչը մէջ ընկաւ, որ հանգստացնի. մէկ սրան էր քաշում, մէկ նրան, բայց ոչ մէկը ուշադրութիւն չէր դարձնում նրա վրայ:

Աղմուկի վրայ հաւաքւեցին ծառայողները, բաժանեցին կուռողներին. Սերգէյ Խրիստոփորովիչին աշխատում էին դուրս տանել, միւսին բռնել էին երկու հոգի և թախանձում էին հանգստացնել: Բայց նա կատաղած գոռում էր.

— Լիբբ, լիբբ անամօթ, նոր լեզու ես հնարել. սրիկայ, փողպատների լեզու...

Սենեակում մնացել էին նա ու Կարպ Կարպիչը:

Երկար ժամանակ Կարպ Կարպիչը նստած սեղանի առաջ լուռ, գրիչը մի ձեռքին, միւս ձեռքը յենած գլխին, ընկել էր մտածմունքների մէջ: Նրան թւում էր թէ բոլորը ինչ լսեց, տեսաւ՝ երազ էր: Ամեն բան շփոթւել էր գլխումը և նա պարզ չէր հասկանում թէ բանը ինչու՞մն է: Ի՞նչ էր ուզում ասել փողպատների մասին. այդ ի՞նչ փողպատներ են, ի՞նչ լեզու, ո՞ւմն էր ակնարկում... Մի՞թէ իր փողպատների մասին էր... Յանկարծ նա մի կողմ նետեց գրիչը, արագ վեր կացաւ, մօտեցաւ տղային, որը անհանգիստ, նեարդային քայլում էր, բռնեց նրա թևից ու գոռաց.

— Ի՞նչ էիր ասում, պարզ ասա... Ի՞նչ գիտես... Ի՞նչ փողպատ, ի՞նչ լեզու... Ի՞նչու ես պէտք է լէքեմ նրա երեսին... Ասա, ասա... Շո՛ւտ...

— Լաւ կանէք Կարպ Կարպիչ եթէ արգելէք ձեր կնոջը իր սէրը այդ ձեռք արտայայտելու:

Կարպ Կարպիչը բարձրացրեց գլուխը և չհասկանալով վեր քաշեց ուսերը:

— Ո՛րոյ այդ ձեռք արտայայտութիւնը ձեր գլխին պողեր է տնկել:

— Գժւել ես ի՞նչ է, պարզ ասա... Խօսքերիցդ բան չեմ հասկանում:

— Երէկ այդ պարոնը հարբած ժամանակ պարծենում էր,

որ ինքը նոր լեզու է հնարել... Ամուսիններ խաբելու լեզու...

— Ապացուցիր, ապացուցիր ասածներդ, — ճշաց Կարպ Կարպիչը, բաց թողեց նրա թևը, գունատուեց ու քիչ էր մնում ընկնի:

— Մի տարուց աւելի է, որ խաբում է ձեզ, իսկ դուք միամտաբար ոչինչ չէք նկատում: Բոլորը գիտեն բացի ձեզանից: Ձեր կինը ամեն առաւօտ ձեր փողպատը կապելուց, գոյների միջոցով հաղորդում է իր սիրեկանին, որտեղ հանդիպել տանն ես լինելու թէ չէ և այլն...

— Ա... ա... — մոռնաց Կարպ Կարպիչը, միանգամից ամեն բան հասկանալով ու թուլացած դողալով ընկաւ մօտիկ մի աթոռի վրայ:

Մի քանի րոպէ տիրեց լռութիւն:

— Ի՞նչ էշն եմ եղել:

Հալով մրմնջաց Կարպ Կարպիչը: Բոլորը գիտեն, բոլորը ծիծաղում, ծաղրում են ինձ... Միայն ես եմ յիմար, ապուշ... Ամենքը, ամենքը գիտեն բացի ինձանից:

Բայց ինչպէս ապացուցանել... Ապացոյց, ապացոյց է հարկաւոր...

— Այդ շատ հեշտ է:

— Հաւ, լաւ, լաւ... Մի քանի անգամ իրար ետեւից կըրկընեց Կարպ Կարպիչը և մի բան վճռելով, դիմեց դէպի դուռը:

— Ո՛ւր...

— Չգիտեմ... Տուն... Չգիտեմ...

— Կնոջդ ոչ մի խօսք...

Կնոջ տնից հեռանալուց յետոյ Կարպ Կարպիչը մնաց մեն ու մենակ: Քունը փախել էր, ախորժակը կտրւել, տխուր, մռայլ... Ոչ ոքի հետ չէր խօսում... Մի քանի օրում զգալի նիհարել էր, մի քանի անգամ մտածեց ինքնասպանութեան մասին, բայց չսպանեց իրեն... Թէև երիտասարդ էր, բայց տառամ էր կանանց և լսել անգամ չէր ուզում նրանց մասին:

Եւ այդպէս, մինչև կեանքի վերջն էլ մնաց մենակ ու երկրորդ անգամ չամուսնացաւ:

* *

Անցան, էլ չկան օրերըս տմոյն,
էլ չկան անվերջ կասկածներըս մութ,
Այնքան թախիժ կայ կեանքում, այնքան թոյն.
Որքան էլ տանջւես ի՞նչ շահ, ի՞նչ օգուտ,
Տառապանքն՝ է սուտ:

Տառապանքն է սուտ, համր ու անձայն,
Նա գիտէ փշրել, խորտակել ագահ,
Մեր կեանքը պայծառ, դարձնել ունայն,
Տարածել մռայլ սարսուռներ ու ահ,
Հաճոյքն է անմահ:

Հաճոյքն է անմահ, խենթ, աղմկայոյզ,
Կեանքի տաղտուկին իշխող անվեհեր.
Մատնիր հաճոյքին ժամերըդ անյոյզ,
Մատնիր հաճոյքին յուշերըդ աւէր,
Օրերդ անսէր...

Ու ես մոռացած տառապանքն ու ցաւ՝
Պատկերիդ առջև ծունր եմ դրել.
Պայծառ է հոգիս, թախիժըս անցաւ,
Ապրել եմ ուզում, ապրել ու սիրել,
Սիրել ու տիրել:

Իմն ես, յաւիտեան շղթայւած ես ինձ,
Առանց իմ սիրոյ աղբատ կը լինես,
Խեղճ ու մոլորւած. քո ջինջ աչերից
Կը կաթի արցունք պաղ անձրևի պէս,
Քո արևն եմ ես:

Քո արևն եմ ես՝ լուսատու հպարտ
Ժպտում ես ահա աշխարհին արար,
Եւ շողքերիս մէջ կենսատու զլարթ,
Պիտի շողշողաս իմ հոգու համար՝

Դու իմ նոր աշխարհ:

Արմենուհի Տիգրանեան



ՓՈՔՐԻԿ ԱՐՁԱԿ ԵՐԳԵՐ

Մ Ա Յ Ր Ի Կ

Կը բարկանաս իմ վրայ ու կըսես.

— Դու շատ յիմար ես, բան դուրս չի գար քեզմէ:

Բան դուրս չի գար ինձմէ, այո, ես գիտեմ. բայց սարսափելի են այդ խօսքերը, ձանձրացեր եմ, յուսահատեր եմ, ես այլևս չեմ ապրիր:

Կը հագնեմ վերարկուս, գլխարկս կը դնեմ, կը դիմեմ մուրա քայլերով դէպի ծովը...

Ճամբան կը խորհիմ, որ դուն պիտի լաս դիակիս վրայ...

Բարի մարդիկ պիտի վերցնեն մարմինս ծովափէն, տուն պիտի բերեն... Ահա քու կարկամած դէմքին յուսահատութիւնը, ահա քու սարսափահար աչքերուն հեղեղ արտասուքները...

Ու ես, դեռ ծովափ չհասած, կը վերադառնամ քու գիրկը, մայրիկ...

*
* * *

Քոյրիկին ձեռքէն բռնած՝ մտաւ մեր բակը ու խնդրեց իր սպիտակ գնդակը...

Սպիտակ գնդակը պահեցի սենեակիս մէջ, դուրս եկայ ու գոչեցի.

— Այստեղ գնդակ չիկայ, հեռացէք...

Խարտեաշ մանուկը լացաւ և քոյրը ձեռքէն բռնած, տալաւ զայն:

Սենեակ մտայ, դէմքս ձեռքերուս մէջ ծածկեցի...

Վերցուցի սպիտակ գնդակը դուրս վազեցի. խարտեաշ մանուկը չիկար...

Անցայ փողոցներով, դաշտուղիներէն, արտերէն. չգտայ:

Վերադարձայ ու պահեցի զայն իմ թանկագին իրերուս մէջ:

Ինծի կը թւի թէ՛ օր մը իր քոյրիկին ձեռքէն բռնած, խարտեաշ մանուկը նորէն պիտի մտնէ մեր բակը ու խնդրէ իր սպիտակ գնդակը...

Այն ատեն, ձգելով գիրքս ծունգերուս վրայէն, առանց ծածկելու արցունքներս ու կարմիրը այտերուս՝ պիտի վազեմ սանդուխներէն վար, պիտի գրկեմ զայն բազուկներուս մէջ ու ըսեմ.

— Այո՛, ահա քու սպիտակ գնդակը. ես գտած էի զայն...

ԻՆԶՈՒ ԶԱՐԿԻՐ

Ինչո՞ւ զարկիր արտոյտին...

Ան կը սիրէր իր կապոյտը, իր կանաչը անտառին.

Ան կը սիրէր իր բարձրերը, բարձունքներու խենթութե-
նէն արբեցած.

Ան կը սիրէր իր երազը պահւտած, հեռո՞ւն, հեռո՞ւն...

Ինչո՞ւ սպաննեցիր այս փոքրիկ երազը:

Ալ իր թևերը չպիտի սաւառնին անհունին մէջէն, հրաբո-
սոր արշալոյսներու արբեցումէն խենթացած...

Ալ իր գեղգեղանքը յստակ, չպիտի ծորի վերերէն, արե-
գակի շողերուն հետ, շողերուն պէս հրաթրթիռ...

Ու հերկողը, մոռնալով մանգաղը արտին մէջ, պիտի
բարձրացնէ մէջքը զարմացած, նայւածքը հեռուն սևեռած...

Ինչո՞ւ զարկիր արտոյտին:

Տես, տխուր է, անդորր, քեզի չհանդիմանէր իսկ.

Տես, սրտիկը արիւնած է ու գլուխը մեղմիկ ինկած է
այնտեղ, այն կապոյտին սարսուռով...

Չտժգունեցա՞ր երբ հրացանը իրեն ուղղեցիր. չտրոփե՞ց
սիրտդ, չդողա՞ց ձեռքդ...

Բայց ինչո՞ւ զարկիր արտոյտին...

Ռաֆայէլ Զարդարեան

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ ԽՕՍԲ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Տէր, ես քու արարածն եմ և եկած եմ շնորհներու շնորհը հայցելու քու անհուն արարչութենէդ:

Ես քու արարածն եմ և դու զիս իմաստուն ես ստեղծած:

Սխալը զոր կը գործեմ՝ քու իմաստութեանդ վրայ կը յեռում և կըսեմ. «Տէրը ինձ այսպէս խորհիլ կուտայ»:

Արարիչ, ես եկած եմ իմաստութենէ աւելի երջանկութիւն հայցելու քու լոյսերէդ, ջերմութենէդ, գարուններէդ և երկինքներէդ:

Երջանկութեան բաղձանքն է, որ զիս մատնած է չարչարանքի և գերագոյն մարտնչումներու:

Ես այնքան մը գիտեմ, որ երջանկութիւնը կայ և կը բրդխի արարչագործութեանդ բոլոր ծագերէն և կը թւի շօշափելի ըլլալ ու կը խարխափիմ անյայտութեան և իմաստութեան մէջ:

Տէր, որ անքննելի ես ու կը քննեմ, որ մութ ես ու կը լուսաւորեմ, որ լուռ ես ու կը ձայնեմ, որ գիտեմ ու չեմ ըսեր, որ հեռաւոր ես ու կը հալիս, որ ծանօթ ես ու չեմ ողջունէր, որ ծանօթութիւնն ես ու մոռցնել կուտաս՝ ողորմէ՛ ինձ ըլլալու բոլորին պէս, չտեսնելու քու ստեղծագործութեանդ բոլոր բարիքները, որ ինձ չեն հասնիր ու ինձ համար գոյութիւն ունին:

Ես կը նայիմ քու արարածներուդ և կը զմայլիմ, երբ կը տեսնեմ, որ կը ժպտին, կերգեն ու կը պարեն: Կը մօտենամ անոնց, որովհետեւ կը հաւատամ, որ անոնք շնորհներու շնորհին տիրացած են և դու անոնց խնճոյքին մէջ կը գտնուիս և կը մօտենամ երջանկութեան լոյսը ընդունելու, բայց այդ արարածներուդ աչքերուն մէջ կը նայիմ և կը տեսնեմ, որ դիմահար քարէ աչքեր ունին և կը զգամ, որ երջանկութեան մօտենալէ աւելի հեռացած եմ անկէ: Ինձ կուգեն յիմարութիւն ներշնչել և ժպտիլ տալ, տեսնելով հանդերձ. և կը բաժանւիմ աւելի տխուր քան այն վայրկեանը երբ դձն, Տէր, իմ կաւէ ձեռք մէջ կեանքի շունչը կը շնչէիր և ամբողջ ձեռք կը հեծեծէր կեանքի ջերմութենէն:

Տէր, եթէ դու չես ուզեր, որ ստեղծագործութեանդ գեղեցկութեան և կարգ ու սարքի մասին կասկածներ ունենամ՝ տո՛ւր ինձ շնորհալի յիմարութիւնը բոլոր միւս արարածներուդ:

Ես կըսեմ իմ ընկերներուս, միշտ քու իմաստութեանդ

վրայ յենելով, իբրև ապաւէն և հիմք, որ դուք տգեղ էք, վատ էք և մութ, անոնք կը ծիծաղին իմ իմաստութեան վրայ, կը ծիծաղին քու պարգևիդ, քու առատաձեռնութեանդ վրայ և կըսեն ինձ. «Քու չափահասութիւնդ մանկական թեւեր ունի և տեսողութեան պայծառութիւնը քու վտանգն է»:

Դու ստեղծեցիր իմ ընկերներս, Արարիչ, Ստեղծողը նաև պատդերուն, ծաղիկներուն և սոխակներուն և տւիր ինձ աչքերու այս վտանգաւոր պայծառութիւնը տեսնելու իմ ընկերներուն տգեղութիւնը:

Տո՛ւր ինձ շնորհներու շնորհը միւս բոլոր արարածներուդ պէս՝ շնորհակալ և երախտապարտ ըլլալու քու անհուն ողորմածութենէդ:

Ես քաղցած եմ և մերկ: Ես կը տեսնեմ և կըզգամ իմ քաղցածութիւնս և ամօթալի մերկութիւնս, և գիտեմ թէ ինչ կերպով կարելի կըլլար քու պերճաշուք արեւիդ տակ ապահովելու իմ կեանքս:

Տո՛ւր ինձ շնորհներու շնորհը, Տէ՛ր, իմ երկրաւոր տէրերուն ոտքերը անուշահոտ իւղով օծանելու ամօքելու իմ քաղցածութիւնս և ծածկելու իմ մարդկային լալագին մերկութիւնս:

Տէ՛ր, ներէ ինձ, դո՛ւ ես Արարիչը, ես՝ արարածը: Ես յենած եմ միշտ քու ինձ պարգևած իմաստութեան վրայ:

Թո՛ղ որ վայելեմ անգիտակցութիւնը և ժպտիմ, ծամածռեմ իմ դէմքս և հաւասար ըլլամ քու միւս բոլոր արարածներուդ հետ:

Երբ ես կը կանգնիմ ծովու ափին և կ'երգեմ՝ իմ երգս հեգնութիւն թո՛ղ չթւի քեզի, որ ծովու բացերը թե կը բանաս և կը մոնչես, իմ երգը ճշմարտութեան խօսքն է և անարատ, որովհետև հեռու եմ քու միւս բոլոր արարածներէդ, քու միւս փառքերէդ:

Վարդը որ կը թողմի և խռոված իր բոյրէն՝ կը նետեմ ոտքերուն տակ, չկարծես, Արարիչ, որ քու ստեղծած գեղեցիկ, արբեցնող, ոգևորող, թարմացնող ծաղիկիդ հանդէպ կուսենամ ատելութիւն և զգւանք, այլ կը թողում մէկ կողմ, որպէս զի չսարսռամ իր գեղեցկութենէն և անգիտակից ըլլամ:

Տէ՛ր, ինձ պարգևէ նմանութիւնը միւս բոլոր արարածներուդ, որպէսզի երկրպագեմ երկիւղածութեամբ քու հզօրութեանդ առջև և շնորհակալ ըլլամ տուած դառնութենէդ, տանջանքէդ, լացէդ, սէրէդ և յուզումներէդ:

Ինձ պարգևէ, Տէ՛ր, յիմարութեան այնքան շնորհք, որ կեանքէն լացով բաժանւիմ և կարծեմ պահ մը որ լոյսերու և ծաղիկներու աշխարհը կը թողում:

Տո՛ւր ինձ երջանկութեան քաղցր արցունքը:

Երբ ես վարդին մօտենամ, տո՛ւր ինձ անզգայութիւնը
չգիտնալու որ անիկա անուշահոտ է, գեղեցիկ է և մաքուր,
որպէսզի հաղորդակից չըլլալով իր սրբազնագոյն էութեան և
չկրնալով տիրանալ և ապրիլ զայն՝ հլութեամբ քաշւիմ իմ
նկուղիս մէջ և հոտոտելով տիրող խոնավութիւնը և նեխած
մթնոլորտը շնորհակալ ըլլամ քու բիւր բարիքներուդ համար:

Արարի՛չ, տո՛ւր ինձ շնորհներու շնորհը:

Տէ՛ր, ինձ ըսէ՛ որ ես յիմար եմ, չեմ հասկնար, չեմ
տեսներ, չեմ զգար, որպէսզի ծունկի գամ քու առջնդ և աղօ-
թելով և պաղատագին աղերսելով շնորհակալ ըլլամ քու բիւր
բարիքներուդ համար:

Բայց դու անդադր կը կրկնես. «Դու իմաստուններու
իմաստունն ես իմ արարածս, ատոր համար է որ քու ար-
շալոյսի երգդ լաց է և խօսքդ ճշմարտութեան դառնութիւն:

Արարի՛չ, ծովածաւալին մէջ իսկ անհուն, աներկիւղ,
վստահ և հրամայող, տո՛ւր ինձ երջանկութեան շնորհքը, և
թող իմ հայցած և ընկալած յիմարութիւնը քու անուանդ
փառքը գովաբանէ յաւիտեանս յաւիտենից:

Պարզե՛ք ինձ այն շնորհքը, որ տեսնեմ և ըսեմ որ չտե-
սայ, զգամ և ըսեմ որ չզգացի, շօշափեմ և ըսեմ որ չկայ:

Տօգոյն եմ և անտեսւած քու բոլոր միւս արարածներէդ
ճշմարտութեան համար:

Առ յինէն, Տէ՛ր գորութեանց և գթութեանց, ճշմարտու-
թեան սարսափելի վտանգը:

Ես պաղատելով կը պաղատիմ որ չզգամ, չշօշափեմ,
չտեսնեմ:

Տո՛ւր, դո՛ւ Անբաւելին, յաւիտենական քաղցր լուծիւնը:

Մի՛ ըսեր, որ տես, զգա՛, շօշափէ՛ և լռէ՛, այլ այնպէս ըրէ՛,
որ չտեսնեմ, չզգամ, չշօշափեմ:

Այս շնորհները ես աղերսելով կաղերսեմ քեզի, ո՛վ Աստ-
ւածութիւն, փուշերու վրայ ծունկի գալով:

Շուշանը որ շողերը կը գրկէ, ինձ այնպէս կուգայ որ
չտեսներ և չզգար:

Տո՛ւր ինձ շուշանի միամտութիւնը:

Հարստութիւն և հանապազօրեայ հացը չեմ պահանջեր
քեզմէ, իմ կեանքիս առօրեայ պահպանութեան համար քու
աստուածային աչքերուդ հսկողութեանը չեմ դիմէր, այլ ան-
զգայութեան շնորհներու շնորհքը կըհայցեմ, Արարի՛չ:

Այս բոլորը կըսեմ և կաղերսեմ միշտ յենելով քու ինձ
պարզեւած իմաստութեան վրայ:

Վ.Ա.ՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՅ

* * *

Աշխարհն ինձ համար մի եկեղեցի,
Մի ջինջ սրբավայր պէտք է միշտ լինի. —
Քաղաքի ժխորն ես խորն ատեցի,
Ուր կիրք ու նախանձ ձուլւած են ի մի:

Ուզում եմ փակւել խորքում տաճարի,
Որ էլ չիմանամ աղմուկ ու շշուկ,
Իսպառ չքանայ բարբառը չարի,
Հեռուն մշուշի քաղաքն հոյաշուք:

Այնտեղ եմ գտնում անդորրն իմ հոգու,
Ուր արբեցումի տենչն է մոռացւում,
Ուր էլ չեն խօսում կրքերն անարկու՝
Աստուծոյ պայծառ, լոյս եկեղեցում:

Ատում եմ աշխարհն... Ատում են և ինձ,
Որ դաւանում եմ կարգերն հնաւանդ,
Չեմ սիրում նորը՝ լսկ սերւած կրքից
Ու նգովում եմ պագշոտ սէրն հիւանդ:

Աշխարհն ինձ համար մի եկեղեցի,
Մի ջինջ սրբավայր պէտք է միշտ լինի. —
Քաղաքի ժխորն ես խորն ատեցի,
Ուր կիրք ու նախանձ ձուլւած են ի մի:
Պահարէ

ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ՆԻԱԳՆԵՐԻՑ

Շղթայեցի՛ր սիրտս սիրով,
Խռովել ես հանգիստն իմ.
Քեզ եմ գովում այս սիրերգով,
Քեզ եմ կանչում մտերիմ:

Սիրո՛ւմ եմ քեզ, քեզնով արբած,
Երկրպագում ըստւերիդ.
— Մոմի նման լո՛ւռ, դժգունած՝
Հալւում եմ ես առաջիդ...

Տիգրան Տէրունի

ՎԻՏԱԼԻ ՊԱԻԼՈՎԻՉ

(Բանաստեղծի յիշատակարանից)

Ամենախեղդիչ մենակութիւնն աւելի լաւ է, քան ընկերակցութիւնը անտանելի մարդու հետ:

Մի քանի ամիս բանտարկւած, աշխարհից բոլորովին կտրւած, զբօսանք՝ մենակ, բաղնիք՝ մենակ, առանց տեսակ-
ւթեան, ես ճիշտ է տանջւում էի, թպրտում, բայց ինձ
կատարելապէս դժբախտ չէի զգում:

Երբ որ վերջապէս մէկ օր, պահապանս հանդիսաւոր կեր-
պով դուռը բանալով աւետեց. «Ընդհանուր զբօսանք»:

Այդ վայրկեանին ես ինձ աւելի երջանիկ զգացի, քան
սիրահարն առաջին «այո»-ն լսելիս:

Սակայն այդ վայրկեանն եղաւ սկիզբն իմ եռամսեայ ան-
վերջ դժբախտութեան:

Նախքան դատ նստող բանտարկեալներին ընդհանուր զբօ-
սանքը օրէնքով վեց հոգուց պէտք է բաղկանայ: Սակայն մեր
բանտում, չգիտեմ ինչու, ընդունւած է երեք, շատ անգամ
երկու հոգու սխտեմը:

Երբ ես առաջին անգամ դուրս եկայ վաղուց երազած
ընդհանուր զբօսանքի, սանդուխքի ծայրին կանգնած էր ընկերս:

Ես ձեռքս մեկնեցի.

— Վիտալի Պաւլովիչ, դը-ա:

Ես անունս տւեցի:

— Ինչպէս:

Ես կրկնեցի:

— Կալիաշան:

Ես ուղղեցի:

— Դժուար անուն է, ծիծաղելի, դը-ա: Երբ դուրս
եկանք, ես սկսեցի դիտել նրան:

Բարձրահասակ, նիհար, երկար վերջաւորութիւններով,
երկար, նեղ երեսով, տափակ բթով, փոքրիկ, անարտայայտիչ

աչքերով—նա ինձ վրայ անասելի ճնշող տպաւորութիւն էր թողնում. նրա կախ ընկած բեխերը, ցանցառ մօրուքը—ասես մի քանի ըռպէով փոխ էին վերցրած մի հին հարբեցողից:

Նրա անհաճոյ ծիծաղն ինձ ճնշում էր, իսկ խօսքի տակի, խօսքի գլխի կրկնւող դրան՝ ուղղակի ջղայնացնում:

Մի քանի օր յետոյ ես նրան ատում էի: Մենակութեանս ժամանակ աշխատում էի չիշել և չէի կարողանում:

— Դըւա, կրկնում էի ես զայրոյթով:

— Զահրումար, պատասխանում էի ինքս ինձ: Խոստովանում եմ, որ շատ յաճախ զբօսանքի ժամանակ, երբ նա կրկնում էր իր գարշելի դա՛ն, ես մտքումս վրայ էի բերում «զահրումար»...

Ընդհանուր զբօսանքը տանջանքի աղբիւր դարձաւ ինձ համար:

Զմեռւայ պատճառով մեր լուսամուտները մեխած են և օդը ուշաթափ անելու չափ ծանր է մենարաններում:

Եւ օրական մի անգամ զբօսանքը հացից ու ջրից աւելի կարևոր է մեզ համար:

Այնուամենայնիւ ես յաճախ մտածում էի հրաժարել զբօսանքից...

Մենարանում կանգնած մշտական գորշահոտութիւնից պարբերաբար գլխացաւ եղած՝ ես այնպէս էի ծարաւում մաքուր, թարմ օդին, ինչպէս այրող անապատի ճանապարհորդը սառն աղբիւրին:

Սակայն երբ գալիս էր զբօսանքի ժամանակը— ես սկսում էի անհանգստանալ:

Վիտալի Պաւլովիչը մի քանի ամիս առաջ դատապարտւած էր մշտական աքսորի: Եւ որովհետեւ ուրիշ նախնական բանտարկեալ չկար, նրան ստիպւած ինձ ընկեր տւին:

Նա շուտով ինձ իր մտերիմը, կամ աւելի շուտ իր հովանաւորեալը համարեց:

Նա տարիներ բանտ էր նստել և ինձ, նորեկիս փորձառութեան դասեր էր տալիս:

Նա խօսել էր սկսում կզակը կրծքին սեղմելով, ապա երբեմն, ասես ճակատից հարւած ստանալով գլուխը յետ ձգում, կարճատես աչքերը միշտ կկոցում:

Նրա համար կեանքում ոչ մի գաղտնիք չկար: Նա բարձրից էր նայում բոլոր կասկածների, որոշումների վրայ:

Ամեն հարցի համար պատրաստած, չափած, ձևած պատասխան ունէր: «Կեանքը, ասում էր նա, մի բարդ մեքենայ է, և միայն տգէտների համար անհասկանալի, ինչպէս մոթոցիկլէտ, որին գիւղացին բերանը բաց, աչքերը չորս արած նայում է, իսկ հմուտ մեքենագէտը սառնորէն քանդում է նրա մասնիկները, մաքրում, նորից միացնում ու հեծած սլանում իր քէֆին... Դը-ւա:»

Նա ազնւական ծագում ունէր, թքում էր այդ կոչման վրայ. բայց պնդում, որ «մտաւոր ազնւականութեանը» պէտք է ամբոխը կուրօրէն հպատակւի: Նա պարծենում էր, որ կեանքի մեծ մասը բանտերումն է անցկացրել, հիանում, որ իրեն Սիբիր են ուղարկում: Սրտանց ցաւում էր, որ ես անհանգրստանում էի մօտակայ դատաւարութեան համար և երազում արդարանալ:

— Ասենք, դժւար թէ ձեզ արդարացնեն:

— Բայց փաստեր չկան իմ դէմ:

— Մի՞թէ փաստի կարիք կայ: Մի՞թէ իմ դէմ փաստեր կային: Յամենայն դէպս վատ չի լինի, եթէ մի քաթանէ տոպրակ պատւիրէք. գիտէք էտապով գնալիս չեմոդան և այլն չի թոյլատրւում, քաթանէ մեծ տոպրակ, դը-ւա:

Ինչպէս նա սիրում էր կռաւ:

Ես նրանից ոչ մի բարի խօսք չլսեցի: Ամենից շատ ես վրդովւում էի, երբ նա փոքրիկ ազգերի մասին էր խօսում:

— Լեհերը, ամենախայտառակ ժողովուրդը: Լակ ձուռ Դրսից ճերմակ, խաբուսիկ, մէջը փտած, կենսական ստեղծագործ ուժից զուրկ:

— Լեհերը ստեղծագործութիւնից զո՞ւրկ... Իսկ նրանց հանճարները՝ Սենկևիչ, Միցկևիչ, Պշի...

— Դատարկութիւն, ոչնչութիւն, — ընդիջում էր նա:

Հայերի մասին արժան չէր համարում խօսել. նրանց ամբողջ էութիւնը բնորոշում էր մի քանի զգւելի անեկդոտներով, որոնց հերոսները միշտ «Կարապետ» էին կոչւում: Սիրոյ մասին խօսելիս քմծիծաղ էր տալիս, ուսերը վեր քաշում. «Մարմնական պահանջ, ուրիշ ոչինչ»: Յաճախ ծաղր ու ծանակի էր ենթարկում իմ անձնական զգացմունքները: Այդ առթիւ ես մի անգամ վրդովւեցի և ամբողջ մարմնով դողալով ասացի.

— Եղէք փափկանկատ, կարող էք չյարգել իմ զգացմունքները, ձեր գործն է, սակայն վիրաւորել ես չեմ թոյլ տայ. լսեցի՞ք:

— Լսեցի և իմացայ, որ դուք հիւանդ մարդ էք և դրա համար էլ ես չեմ կարող բարկանալ ձեզ վրայ... Դը-ա:

Մի քանի րոպէ մենք լուռ քայլեցինք, ապա նա թեւ վերցրեց և ամենահանգիստ աներեսութեամբ ասաց.

— Դուք պէտք է ձեր նեարդերի մասին մտածէք: Մարմնամարդութիւն, սառը ջրով մարմինը շփել: Դա անհրաժեշտ է. լուրջ մարդ լինելու համար առողջ նեարդեր են պէտք, դը-ա:

— Զահրումար, — վրայ բերեցի ես, իհարկ է մտքումս:

Մէկ օր նա հանդիսաւոր կերպով յայտարարեց.

— Վերջապէս դատավճիռս հաստատւած է և ես շուտով ճանապարհ կընկնեմ:

«Փառք Աստծու», մտածեցի ես: Ապա բարձր.

— Բայց ինչո՞ւ վճռաբէկ բողոք չէք տալիս:

— Իսկ ինչո՞ւ տամ:

— Որպէսզի, եթէ չարդարանաք, գոնէ բերդարգելութեամբ փոխարինեն ձեր վճիռը: Ժամանակը լրացաւ՝ ազատ մարդ էք:

— Ես միշտ կարող եմ ազատ լինել, տեղ հասայ՝ մի քանի ամսից յետոյ՝ հայդէ Ճապոնիա, իսկ այնտեղից ուր որ քէֆս տայ:

— Բայց իրաւագուրկ, փախստական...

— Երբ որ ձեզ մշտնջենական աքսոր տան՝ դիմէք այդ միջոցին, իսկ ես ինձ իրաւագուրկ էլ շատ լաւ կըզգամ:

Էլի՞ կռնաց...

— Ինձ աքսոր չեն տայ. ես դրանում համոզւած եմ...

— Ըհը... Դը-ա:

— Բայց ես ձեզ վրայ զարմանում եմ:

— Իսկ ինչո՞ւ:

— Այնպէս, միթէ դուք չէք ցանկանայ ապրել, իբրեւ օրինական մարդ:

— Ի՞նչ կարիք կայ:

— Թէկուզ անձնական հանգստութեան, ընտանեկան երջանկութիւն ստեղծելու համար:

— Այն որ դուք ընտանեկան երջանկութիւն էք անւանում, ես միշտ և ամեն տեղ կարող եմ գնել, երբ ցանկանամ:

— Թո՛ւ, ափսոս իմ բերանը:

— Այդպէս, ուրեմն դուք ուրախ էք, որ շուտով Սիբիր պիտի գնաք:

— Կասկած չկայ:

— Ձեմ հաւատում:

— Ձեր գործն է, բայց ես ազնիւ խօսք եմ տալիս, որ անկեղծ եմ ասում:

Ես դատաւարտւած էի ամեն օր կէս ժամից աւելի այս մարդու հետ լինել և այնուհետև էլ յիշել նրա ասածները, զայրանալ նրա ինքնավստահութեան վրայ, անվերջ արիւնս պղտորել:

Մի օր դուռն բանալով պահապանն ասաց. «Այսօր վերջին անգամն էք զբօսնում Վիտալի Պաւլովիչի հետ»:

— Ի՞նչպէս:

— Այսօր նա ճանապարհւում է:

Ի՞նչ մեղքս թագցնեմ, առաջին պահոյն ուրախացայ: Բայց երբ հանդիպեցի նրան՝ յուզւած, քիչ կուացած, մօրուսը ցնցուելիս, սիրտս լցւեց մի աննուն կարեկցութեամբ և տմաշեցի քիչ առաջ զգացածիս համար:

Մենք իջանք բակ: Մի քանի րոպէ լուռ էինք:

— Ձեր սեփական շորերով էք գնալու:

— Ո՛չ:

— Իսկ շղթայելու են:

— Այո, բայց տեղ հասնելուն պէս կարձակեն:

Նա խօսում էր, աշխատելով ծածկել ներքին յուզմունքը, աւելի շատ էր գլուխը յետ ձգում, աւելի շուտ-շուտ էր կղակը կրծքին սեղմում ու դը-ն կրկնում, բայց ես նրան չէի ատում. չէ, նոյնիսկ մօտեցել էի նրան, թեւ վերցրել, համբերութեամբ, քնքոյշ համբերութեամբ լսում էի նրա խօսքերը: Ես երևակայում էի նրան շղթայւած, գորշ ու կոշտ բանտային շորերով, կայանից-կայան, բանտից բանտ ողողւած հայհոյանքով, ենթարկւած պահակների քմահաճոյքին ու կոպտութեան...

Երկու պտոյտ չէինք արել, որ դուռը բացւեց և պահապանը կանչեց.

— Վիտալի Պաւլովիչ, դարբնոց...

«Շղթայելու են տանում», կայծակի արագութեամբ անցաւ մտքովս... Նա յանկարծ կանգ առաւ, շւարած նայեց երեսիւ

ու չկարողանալով յուզմունքը զսպել՝ խեղդւած ձայնով ասաց.

— Զար ու բարի, ինչ որ անցել է ներէք: Մնաք բարով,
— ասաց ու դողդոջուն ձեռքը մեկնեց: Ես ձեռք չտուեցի. ես
նրան գրկեցի ու համբուրեցի:

Վերաբերմունքս անսպասելի էր նրա համար. նա սկզբում
չպատասխանեց համբոյրիս, ապա, ասես սթափւելով, գրկեց
ինձ և մի քանի անգամ ջերմաջերմ համբուրեց. նրա աչքերը
թաց էին...

Հիմա երբ յիշում եմ մեր միասին ապրած ամիսները, իմ
ատելութիւնը, զայրանալը, թէկուզ մտքումս նրան հայհոյելը
— սիրտս կսկծում է, կրծքիս մէջ ծակող ցաւ եմ զգում...

Զբօսանքի ընկերս մի լաւ տղայ է, որն ինձ հասկանում
է, որի հետ արդէն կապւել եմ, բայց ես չեմ կարողանում
Վիտալի Պաւլովիչին մոռանալ: Ես կուզէի, որ նա ինձ հետ
լինէր. ես կաշխատէի հասկանալ այդ մարդուն, որը գուցէ
ոչ մի քնքշանք ու ջերմութիւն չի տեսել, որին գուցէ ոչ ոք
մի քաղցր խօսք չի ասել. ես կաշխատէի սիրել, ջերմացնել
նրա ցամաքած սիրտը... Մենարանումս նստած, նրա մասին
երկար մտածելիս, յանկարծ կոկորդս այնպէս է սեղմւում, որ
ես չեմ կարողանում լաց լինել...

Նրա հեռանալով, ասես կեանքիցս մի բան է պակասել,
որ ոչնչով չի կարելի լցնել:

Որտե՞ղ է տեսնես հիմա նա, ո՞ր էտապում, ո՞ր կայանում:

Եթէ քնած է ճանապարհից ուժասպառ. «Հանգիստ քուն,
իմ խեղճ ընկեր»: Եթէ սւիններով շրջապատւած, ընկերով թէին
շղթայւած՝ քայլում է ձիւնեղէն անապատով.

— Բարի ճանապարհ, բարի վերադարձ...

Գ. ՔԵԱԼԱՇԵԱՆ



«ԱՂՕԹՔԻ ՄՈՄԵՐ» ՀԻՒՍՔԻՑ

Ամպերը մուրը ճայերի նման
Լսւո խոնարհւել են ջրերի վրայ.
Հսկ կրում են լուծը թափառման,
Ինձ պահում է լոկ աղօթքը նրա...

Ակացիան որպէս արծաթէ ժանեակ
Քրոջ պէս յուշիկ թեքւել է վրաս.
Ահ, ինձ օրօրի մենակ եմ, մենակ,
Քնքոյշ ակացի, իմ ճերմակ երազ:

* * *

Երբ ես մեռնեմ իմ անգին,
Թաղիւր լճի եզերքին.
Թող խոնարհւի յաւիտեան
Վրաս քնքոյշ ակացիան...

Գերեզմանիս քո ձեռքով,
Բոցոտ, ցաւոտ արցունքով,
Գրիւր անջիջ իմ վրայ՝
Թէ ի՞նչ վշտից ես մեռայ:

Անուրջ

* * *

Այսօր եղիւր յոյսի պէս՝
Քաղցր ու խաբող, մեծ ու հեզ.
Հագիւր ատլաս ու բեհեզ.
— Շողան, դողան լոյսի պէս:

Եղիւր քնքուշ, թաւիշեայ,
Կախարդ խօսքեր մրմնջան.
Եղիւր անհւշ, որպէս բոյր,
Եղիւր որպէս մեղմ համբոյր...

Ինձ պարուրիւր կուսական
Ծով մազերիդ ծփանքով
Եւ արբեցրու դիւթական
Քո հայեացքիդ գգւանքով...

Արշաւիր Խոնդկարեան

ՀԱՆԴԵՍ

Մարտից յետոյ ապրելու տենչն էր իշխում ամենուրեք, ամենքի սրտին:

Բուք-բորանին փոխարինել էր կենսատու արևը, չոր ու ամայի գետինն էլ ծաղկաւորել, գուգւել էր արդէն...

Այդօր նրան նոր ու ճերմակ հանդերձ էին հագցնում:

Նորահարսին վայել մոմէ ծաղիկներն սպիտակ շղարշով կոյսի գլուխն էին պճնել. թուխ վարսերը ծաղիկների մէջ կորել. հովտաշուշանի բուրմուռնքն ամենքն էին վայելում...

Ճերմակ գուլպաները՝ նորաձև թափանցիկ են, նոյն գոյնի տուֆլիները ոսկեգօծ ծաղկով զարդարւած...

Չկայ անգին քարի ո՛չ մի կտոր, չկայ ոսկու նշոյլն անգամ:

Նրա ժպիտներում լողացող դէմքը գունատւել ու այլայլւել էր, աչքերը փոս ընկել, քիթն աւելի էր ցցւել ու աշխարհից կարօտ կիսախուփ աչքերը ուղղել մի կէտի...

Նա նայում ու չէր տեսնում...

Երգից՝ բայաթուց և իրարանցումից ողջ տունն էր թընդում. քահանան հոգևոր պարտքն է կատարում. նրա խումբը կազմ ու պատրաստ տիրոջ հրամանին է սպասում...

Դանդաղ ու համր երթը փառաւոր էր, շատերն էին մասնակցում նրա հարսանիքին, պսակադրութեան հանդիսին, «թամաշաւորներին» տեղ չկար...

Ծիսակատարութիւնից յետոյ իրեն պէս ջահիլ, մերձ ու մտերիմ կոյսերով շրջապատւած շքերթն այլ ուղղութեամբ շարունակեց ճանապարհը:

Ե՛ւ մտազբաղ, և՛ զրուցող, և՛ ծիծաղող հանդիսականները միատակտ քայլերով հետևում են հանդիսին՝ մերթ գլխիկոր, մերթ գունչները ցցած առաջին տեսարանին հետևելով:

Շատ էլ հեռու չէր նրա համար նոր միայն կառուցած տունը, որի հսկայական տարածութիւնը կանաչ ֆօնով և գոյն-գոյն ծաղիկներով գորգն էր ծածկել, որին էլ աւելի դեղեցկութիւն տւողը մարմարէ արձաններն էին պէս-պէս արտայայտութեամբ, հազար ու մի ձևերով...

Կոյս-ընկերների ողբին տեղի էր տւել հանգստութիւնը...
«Առանց Աստղիկի» — այս մտքի հետ հաշտւել էին արդէն...

Միջօրէի ջերմացնող արևը ժպիտ ստեղծող ճառագայթներն ուղղեց նրա դեմքին. շուրջը ժպտաց, ծաղիկները ջերմութեան նշան տւին, բայց նորահարսն անշուշ էր, անժպիտ...

Մի փոքրիկ ամպ արևը ծածկեց թէ չէ, լսեց անատամ փարաջաւորի «Ճանապարհ ճշմարիտը»:

Ամենքի դէմքն էլ մռայլւեց, աչքերն արցունքով լցւեցին. լսեց խո՛ւլ հեկեկոց...

Մի ակնթարթ, և պատրաստ էր հանդիսականների կազմած թումբը...

• Մ. ԷՓՐԻՆ

*
* * *

Գարնանագեղ կոյս, արև՝ աղջիկ.

Մեղուններ քո վարդ այտերէն մեղրը կը քաղեն,
Որ քաղցը է այնպէս...

Արև քո բիբերէդ բոցեր կը ժողվէ,
Որ ջերմ է այնպէս...

Բլբուլ քո շուրթեր համբուրեց,
Որ արբած է այնպէս...

Պարտեզէս անծաղիկ, քո ոտներ անցան,
Որ շուշաններ են փթթեր այնպէս...

Եղնիկներ շնչեցին հոգին քո շուշան,
Որ անմեղ են այնպէս...

Կարապներուն քո մերկութիւնը բացի՛ր
Որ ձիւնագեղ են այնպէս...

Թիթեռնիկներ քո ժպիտը խմեցին,
Որ խենթ են այնպէս...

Ա՛խ. սիրտս ինչո՞ւ,
Ինչո՞ւ կուլայ այսպէս...

Արևագեղ կոյս, ձիւնսիրտ աղջիկ...
Վիթու Զիննի

Մարդկութեան ամենավերջին կրօնը հե-
թանոսութիւնն է լինելու:

ՆԵԹԱՆՈՍԱԿԱՆ ՍԱՂՄՈՍՆԵՐ

Գլ. ա.

1—Մի ժողովուրդ է վրան զարկել Արարատի լանջերին,
Արագածի հովերի տակ, Սասնոյ լեռների վրայ, Կիլիկիոյ ափին:

2—Իշխան չունի այդ ժողովուրդը. ինքն ամեն իշխանա-
կան ցեղ է:

3—Ես էլ որդին եմ այդ ժողովրդի. սկիզբ եմ առել նրա
հետ և քանի կայ, ես չեմ մեռնի: Բայց մի անձն թիւրիմա-
ցութիւն եմ աշխարհի մէջ, աշխարհն էլ մի առասպելական
դէպք է միայն այդ ժողովրդի համար:

4—Եփրատի ջուրն է խմում իմ ժողովուրդն իշխանական,
Արաքսի ափին հնչում է գերանդին նրա արծաթէ և փորում է
ափերն Արաքսի ու Եփրատի և իր հոգու գանձերն է թաղում:

5—Շոգ է. հեռւմ է ժողովուրդս հայրենի Արևի տակ և
քրտինքը հոսում է ճակատներից ու այդ քրտինքը երգ ունի և
այդ երգը բամուլ պէս արդար է և քամիի պէս ամեն հորիզո-
նի տակ երգւի պիտի:

6—Հողը տէր չունի, սրտերը՝ օրէնք: Տեսնում եմ ահա
մաճն ու գերանդին թագաւորների ձեռքին: Հնազանդ են եզ-
ները ոսկիահնչիւն զանգակներով. երեկոյեան սուերի հետ ա-
րածում են շուշանների դաշտերում:

7—Եւ աղջիկներն արևագուն, ժպիտների պէս բարի, այ-
գիներում հայրենական, հաւաքում են ջահիլների հետ և ժո-
ղովուրդս բազմանում է ու բազմանում: Եւ ամեն վրան խըն-
ճոյք ունի ամեն օր:

8—Եւ մանուկները բարի եղնիկների հօտերն են արածում
մեր լեռներում մեհենական:

9—Ժողովուրդս մի բոցէ երազի մէջ երազուն, մի կար-
միր առասպել է անգիր անում:

10—Տօն է. մեծ ուխտ, քրմերը տօնական են Սօսիաց
անտառի ափին. ծնկաչոք է ժողովուրդս արևապաշտ. բոլորի
աչքերը պայծառ. բազինների մշտավառ կրակի պէս և սրտերն
իրենց պաշտած արևի պէս վառ, արևի համար բաց:

11—Որթան կարմիրն է բուսնում իմ հայրենի դաշտե-
րում ու ժողովուրդս ամեն ծիրանի ունի:

12—Եւ երկիրս զանգ է մի մեծ ու երջանիկ է ժողո-
վուրդս հազարասուածեան:

13—Մի մեծ հէքիաթ է ժողովուրդս աշխարհի մէջ. ով
սովորեց չի մոռանայ, ով չգիտէ թշնամին է մեր:

14—Տօն է այսօր Նաւասարդեան. Մարգարիտ է տեղում
մարգարտէ ձեռքերից և անտառների պէս կանգնած է ժողո-
վուրդս Արագածից մինչև Մասիս:

15—Եւ նժոյգներն արևաբաշ, արծաթէ պայտերով, ամեն
ոք բազէ ունի ձեռքի վրայ: Արագածից մինչև Մասիս ծաղիկ
է ու բոյր չգիտես, որն է ծաղիկ, որը աղջիկ:

16—Իջնում են Արագածից օձերը վաշտ առ վաշտ, խա-
զազարդ են թագաւորն ու թագուհին նրանց: Ելնում են Մա-
սիսի վիհերից օձերը մասիսեան, վիզերնին վեր, կատաղեցրել
է Արևը նրանց, շտապում են դաշտ, ուր սպասում են օձերն
Արագածեան: Պատերազմ է. ծափահարում է ժողովուրդս
վիշապագուն *):

17—Ուխտի օր է. աղօթում են ամենքն իրենց աստուած-
ներին. աստուածների և ժողովրդի մէջ սահման չկայ: Գինին
են ցնձուղում արևը դէպի, օծում են գինիով գլուխներն իրենց
աղջիկները ոսկէ, որ ոչ մի ռամիկ չծնանին:

18—Բոլոր այգիները առազաստ են հարսանեկան. բոլոր
ծաղիկները՝ անկողին: Ուխտից յետոյ է և մեծ ուխտ... Սահ-
ման չկայ. քաղցր հառաչանքների ծով է և բոլորն հարբած
են այդ ծովում:

19—Լուռ են այգիներում, խաղողի վրայ. արևի պէս
տաք է համբոյրները. բոլոր ծնւածները գեղեցիկ, բոլոր ծըն-
ւածները իշխան են և կամ թագաւոր:

20—Երեկն ու վաղը չկայ: Եւ լեռների մէջ, դաշտերի
վրայ, գետերի ափին, իրենց աստուածների մօտ բազմանում
են վրանները, և աչք չէ կտրում ծայրը նրանց:

21—Գուսանները զարնւած են արևով ու չեն կարող չեր-
գել: Կրակից է աշխարհս, ժողովուրդս մի մեծ կրակ արևից
պոկած. ես իմ ժողովրդի հոգում շիկացած մի խօսք եմ նրա
շուրթից ընկած, և աշխարհը առասպելական մի զրոյց իմ ժո-
ղովրդի համար:

Գ. ՇԱՀԻՆԵԱՆ

*) Ըստ ժողովրդական առասպելի հին ժամանակներում Արարատեան դաշտում
Մասիսի և Արագածի օձերի մեծ ճակատամարտներ է եղել:

ՀԻՆ ԽՐՃԻԹԸ

(Ս. Կղիաւսիից)

Կասկած չկար, Ալէքսին պէտք է նորոգէր իր խրճիթը, որովհետեւ ամեն ընդէ նա վտանգի էր ենթակայ:

Խրճիթն այն աստիճանի հին էր ու խարխուլ, որ գիւղի զւարճախօսութեան առարկան էր դարձել:

— Կարծես Ալէքսու խրճիթը լինի,—ասում էին գիւղացիները հիւժւած, զառամեալ ծերունիների մասին, որոնց մի ոտքն արդէն գերեզմանումն էր:

Ինքը՝ տանտէրը բոլորից լաւ գիտէր, որ խրճիթն հին էր ու անպէտք. Ալէքսին շատ էր մտածել այդ մասին:

Վերջապէս մի օր ծերունին հրաւիրեց հարեան որմնադիրներին և սկսեց խրճիթը կարկատել:

— Էհ, հէր օրհնած, ինչի՞դ է պէտք այս խարխուլ շէնքը, քանդիր ու նրա տեղ նորը կառուցիր, ի՞նչ պէտք է նստի քեզ վրայ,—կրկնում էին որմնադիրները հանաքով:

— Թող, եղբայր, թող մնայ. ես նորը կառուցելու գլուխ չունիմ: Պապական յարկի տակ առանց կրակի էլ տաք է...

Ալէքսին ոչ մի ընդէ չէր հեռանում աշխատող որմնադիրներից, որոնք մինչև վերջը չէին դադարում ծաղրել խրճիթը իր տարօրինակ տիրոջ հետ միասին:

Խրճիթի մի պատը բոլորովին թեքւել էր դէպի արեւմուտք:

— Երեի քամին է թեքել:

— Չէ, ի՞նչ քամի, հարբած որմնադիրները շարած կը լինեն պատը,—քրքշում էին վարպետները:

Խրճիթը նորոգեցին, կարգի բերին կտուրն ու մի քանի քանդած մասերը:

Ալէքսու ուրախութեանը չափ ու սահման չկար... Վրացիներին յատուկ եղանակով հիւրասիրեց նա որմնադիրներին, օրհնեց նրանց և հանգիստ սրտով սկսեց սպասել աշնան անձրևներին:

Ամառը մօտ էր վախճանին: Երկինքը, լեռներն ու դաշտերը հետզհետեւ ծածկւում էին անթափանց մառախուղով...

Յաճախակի անձրևները, դեղնող տերևներն ու մերկացող ծառերը վկայում էին աշնան մօտիկութիւնը:

Օրերը տխուր ու անգոյն էին, արևը՝ դժգոյն, ջերմութիւնը՝ նւազ:

*
* * *

Մի երեկոյ, բոլորովին անսպասելի, սկսեց անձրևել:

Անողոք անձրևը կարծես էլ չէր ուզում կտրւել...

Մութն ընկնում էր, եղանակը ցուրտ էր ու խոնավ:

Ալէքսին էլ ցուրտ զգաց:

Խրճիթի մէջտեղը կրակ արեց: Կրակի ջերմութիւնը, բոցն ու կայծերը քուն էին բերում խղճուկ, միայնակ ծերունու աչքերին... Իսկ անձրևը, անխիղճ անձրևը չէր դադարում նրա փոքրիկ խրճիթը ծեծելուց:

Դուրսը ոռնում էր քամին. անձրևը քանի գնում աւելի էր սաստկանում. փոթորիկը պտտեցնում էր անձրևի կաթիլներն ու ներս թափում խրճիթի փոքրիկ լուսամուտից:

«Անձրևը ներս է թափւում», մտածում է ծերուկը և վեր կենում ու լաթերով խցկում, փակում լուսամուտի անցքը:

Քամին ոռնում էր ամբողջ գիշեր և անձրևն էլ, սարսափելի անձրևը, շարունակւում էր առանց դադարի:

Ամրան շոգերն այնպէս չէին յագեցրել օդը գոլորշիներով, որ աշնան այս դաղ դնող անձրևը շուտ կտրւէր:

Առաւօտեան թղպոտ արշալոյսին միայն դադարեց անձրևը: Ծերունին այդ գիշերն ինչ որ ճանչոց էր լսել. «Անշուշտ խրճիթի որևէ տեղը փլասւեց»:

Ալէքսին անհանգիստ սպասում էր լուսանալուն:

Առաւօտեան վաղ, հենց որ երկինքը շառագունեց, ծերունին վեր կացաւ պտտեց խրճիթի շուրջը և ի ցաւ սրտի տեսաւ, որ հիմքի գերանը կոտրւել է, իսկ այնտեղ լճացած անձրևաջուրը ճնշում էր հիւսիսային պատը...

— Հիմքի միւս գերանն էլ է փչացած, — բացատրեցին որմնադիրները, որոնց բերել էր Ալէքսին հենց նոյն օրը:

— Փոխիր հիմքը, թէ չէ խրճիթդ ամեն ընդէ կարող է փլչել:

— Հիմքը փոխելու համար ամբողջ տունը պէտք է քանդեմ, իսկ դա անկարելի է. պատերը, կտուրը, ամեն ինչ պէտք

է քանդեմ, ամեն ինչ պէտք է փոխեմ, ամեն ինչ պէտք է շինեմ նորը, նորը...

Նորը կառուցելու միտքը շատ էր վախեցնում խեղճ Ալէքսուն և նա էլի հին ճանապարհը ընտրեց. որոշեց փչացած տեղերը կարկատել, յուսալով թէ մի գուցէ այդպիսով խրճիթը մի կերպ քարշ կը տայ իր գոյութիւնը:

Այդպէս էլ արեց, որպէսզի կարողանար իր ծերուկ գլուխը աշնան այդ խոնաւ օրերին պատսպարել:

Աշունն էլ անցաւ, մօտենում էր ձմեռը. անձրեւներն աւելի ու աւելի յաճախ էին գալիս: Մի երկու անգամ էլ ձիւն եկաւ: Յաճախակի անձրեւներ, երկինքն անարեւ, լեռները թխպոտ...

Իսկ խրճիթը անպայման պէտք է վերանորոգւէր, նա քանդւելու վրայ էր:

Շատ անգամ էր ծերունին տարւում այդ մտքերով և շատ անքուն գիշերներ անցկացնում. ի՞նչ անի, ի՞նչ շինի, մի տեղ կարկատում միւս տեղն է քանդւում...

*
* * *

Մի գիշեր սարսափելի բուք-բորան բարձրացաւ. ուժեղ քամին խենթ հարւածներով ծրմրում էր ու գետին կպցնում մատաղ ծառերը, որոնք սրտաճմլիկ ճռնչիւններ էին արձակում:

Ալէքսին կրակի մօտ նստած մտածում էր.

— Դուրսը քամի է, վտանգաւոր քամի...

Յանկարծ ինչ որ ճրճուոց հասաւ ծերունու ականջին:

— Դարձեալ հիմքի գերաններն են,— մտածեց ծերունին և վախենալով վեր կացաւ:

Ճրճուոցը կրկնւեց, երրորդւեց. ծերունին լարում է լսողութիւնը որոշելու, թէ որտեղից է գալիս ձայնը: Նա բացում է դուռը և շտապով գնում դէպի այն կողմը:

Տանջւած ծերունին նորից ներս մտաւ:

Կտուրից հենց կրակի վրայ գլորւող անձրևի կաթիլները ադամանդի նման փայլ էին արձակում:

Ծերունին լուռ է, նա իր զննող հայեացքը դարձնում է պատերի, առաստաղի վրայ: Ծերունու տանջւած դէմքը նրա հոգու ցաւն է արտայայտում հին բնի քանդւելու համար: Քանդւում է խրճիթը, Ալէքսու պապական տաք ապաստանը:

Էլ ոչ մի հնար չկայ...

Ալէքսու հին խրճիթը անպայման, անպայման պէտք է փոխարինւէր նորով:

ԳՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

Ա Ռ Ա Կ

—Ապրած կենսա, մեծ թագաւոր,
Բա չես ասիլ, որ ամեն օր,

Մեր աներես,

էն պոթկերես

Սպարապետը

Իր նամուսից ձեռք վէ կալած,

Լիրբ երեսին մի մաղ քաշած,

Քո դէմ որոգայթ է լարում՝

Մեր քաջ զօրքին դէմըդ հանում,

Որ վաղ թէ ուշ

Գահիդ վրայ,

էսօր էգուց

Գայ տիրանայ:

Որ իմացայ, մնացի շւարած՝

Ոնց որ գլխիս կրակ վառած:

Դէհ, իմ պարտքն էր, եկայ ասի,

Արա ինչպէս քէֆդ կուզի:

Ալէքսանդր Մակեդոնցին

Մի աղանջը ամուր փակած,

Աղանջ դրեց իր վէզիւրին,

Աղանջ դրեց,

Չափեց կշռեց,

Վերջը ասաց.

—Գնա բանիդ:

—Բայց ասա ինձ, Ողորմած Տէր,

Ինձ լսելիս, պատճառն ի՞նչ էր,

Որ մի աղանջդ փակեցիր...

— Որ էն մէկով լսեմ նրան,

Ում քիչ առաջ,

Հենց իմ առաջ,

էնպէս խստիւ բամբասեցին:

Դիսակ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Երես
ՍՏ. ԶՕՐԵԱՆ—Սատանայ	49
ՎԱՀԱՆ ՏԵՐԵԱՆ—Եթէ չըկայ Աստուած (բան.)	66
ՄԻՔ. ՄԱՆԻԷԼԵԱՆ Կարպ Կարպիչը	67
ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ—** (բան.)	75
ՌԱՖԱՅԷԼ ԶԱՐԴԱՐԵԱՆ—Փոքրիկ արձակ երգեր	76
ՎԱՀԱՆ ԹՈԹՈՎԵՆՑ—Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ	78
ՊԱՀԱՐԷ—** (բան.)	81
ՏԻԳՐԱՆ ՏԵՐՈՒՆԻ—Տրամուխեան նւագներից (բան.)	81
Գ. ՔԵԱԼԱՇԵԱՆ—«Ճաղերի յետև» գրքից՝ Վիտալի Պաւլովիչ	82
ԱՆՈՒՐԶ—«Աղօթքի մոմեր» հիւսքից (բան.)	88
ԱՐՇԱԽԻՐ ԽՈՆԴԿԱՐԵԱՆ ** (բան.)	88
Մ. ԷՓՐԻԿ—Հանդէս	89
ՎԻԹՈՒ ԶԻՆՆԻ—** (բան.)	90
Գ. ՇԱՀԻՆԵԱՆ—Հեթանոսական սաղմոսներ	91
ԳՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ—Հին խրճիթը (Ս. Կլդիաշւիլիից)	93
ԳԻՍԱԿ—Առակ	96

„ՊԱՏԱՆԻ“ ՀՐԱՏԱՐԱԿԶԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

«Գրակ.—Գեղարւեստակ. Ալմանախի» շուրջ համախմբւած մի խումբ երիտասարդների նախաձեռնութեամբ Թիֆլիսում կազմակերպւել է «Պատանի» Փայափրական Հրատարակչական Ընկերութիւն, որի նպատակն է առանձին գրքերով հրատարակել երիտասարդ գրողների ինքնուրոյն և թարգմ. գեղարւեստական գործերն ու քննադատական աշխատութիւնները՝ «Երիտասարդ Գրողների Գրադարան» անւան տակ: Ընկերութեան փայն արժէ 25 ուրբի: Փայ գնել ցանկացողները դիմելու են կազմակերպիչ մարմնի լիազօր Մ. Էփրիկեանին (Խոջիվանքի փող. 5): Գրադարանի № 1-ը լինելու է Միք. Մանուէլեանի երկերի ժողովածուն, որը լոյս է տեսնելու առաջիկայ աշնանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳՐՈՂՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՀՐԱՏԱՐԱԿԻՈՂ

≡ ԳՐԱԿԱՆ-ԳԵՂԱՐԻԵՍՏԱԿԱՆ ԱԼՄԱՆԱԽԻ ≡

1917 թ. ՎԵՑ ԳՐԳԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 3 Ռ., ՀԱՏԱՎԱՃԱՌ 80 ԿՈՊ.

Իւրաքանչիւր գիրք բաղկացած է լինելու 48 մեծադիր էջից:

Թիֆլիսում բացի խմբագրատնից, բաժանորդագրւել կարելի է Գ Ի Ր գրախանութում: Խմբագրութ. հասցէն՝ Тифлисъ, Ходживанская 5, М. Эприкянъ,

Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն Ե Ր. Թ Ի Ֆ Լ Ի Ս—Երւանդ Տոլակ, Վաղարշակ Յովհաննիսեան, Վ. Զիթունի, Մ. Սօրի-Մելիքեան, օր. Ա. Ահարոնեան, Ան. Թումանեան, Հ. Պետրոսեան և Գ. Դարդաշեան: Բ ա թ ու մ—Արշակ Մարութեան: Բ ա գ ու —Աւագ Կոծինեան: Ա լ է ք ս ա ն —Դրապուլ—Արշաւիր Խոնդկարեան և օր. Եղ. Տէր-Յակոբեան: Շ ու շ Ի—Ս. Մուսայէլեան և Լ. Վարդապետեան: Գ ո Ր Ի—Գիսակ:

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

„ՊԱՏԱՆԻ“ ԱԼՄԱՆԱԽԻ

1910—12 թ.թ. կօմպլէկտները, գ. 2	ն. 50 կ.
1913 թ. » (սակաւ.)	2 ն. 50 կ.
1914 թ. » (»)	1 ն. 50 կ.
1915 թ. I—II գիրքը	— 50 կ.
«Գրական-Գեղարվեստ Ալմանախ»	I գ. 70 կ.
» » »	II գ. 80 կ.
Աւագ Կոծինեան—Cloria victis	10 կ.
Լևոն Լևոնի—«Իմ էսքիզներից»	10 կ.
Հ. Համբարեան—Տարաբախտ ուսանողը	20 կ.
Մ. Յովհաննիսեան—Մրմունջներ	— 10 կ.
Բոլոր գրքերը միասին ճանապարհածախսով	
արժէ 9 ռ. 50 կ.: Դիմել՝ Тифлисъ, Ход-	
живанская 5, М. Эприкянъ.	



ԳԻՆԸ 80 ԿՈՊ.

